Ակսենք նրանից, որ «զենքայնացում» բառ հայերենում չկա, Փաշինյանը, հավանաբար, Weaponize-ի մասին էր խոսում, որն անգլերենից թարգմանաբար նշանակում է՝ վերածել զենքի, բայց ո՛չ զենքայնացնել: Նա Իսրայելին չի արձագանքում մեկ պարզ պատճառով՝ իրեն իշխանության են բերել ցեղասպանության հարցը փակելու օրակարգով:

Կարդացեք՝ էջ 4

Հայաստանը Ռուսաստանի ազդեցությունից դուրս է եկել ոչ ՀՀ մեղքով կամ կամքով, այլ Ռուսաստանի, Ռուսաստանի թուլության, իր շահերը պաշտպանելու հարցում անհետեւողականության պատճառով: Հայաստանի համար եղել է պայքար Ռուսաստանի եւ Արեւմուտքի միջեւ, եւ այդտեղ հաղթել է Արեւմուտքը, եւ դրանում Հայաստանը մեղավոր չէ:

Կարդացեք՝ էջ 5



Մի երկու շաբաթ առաջ Տարոն Աճեմօղլուն հետաքրքիր հայտարարություն էր արել՝ Հայաստանի հետ կապված, որի վրա քիչ ուշադրություն դարձվեց: Իսկ նման մակարդակի մարդկանցից սովորաբար կարծիք հարցնում են, այսպես ասենք՝ զգալի գումար վճարելով: Նրանք այն մակարդակի փորձագետներից են, որոնք ամեն օր չէ, որ խոսում են:

Կարդացեք՝ էջ 6

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 107 (4242), 1 հուլիս, չորեքշաբթի, 2026

www.hraparak.am

«Ենք Գյումրիում գյումրեցիների հետ միասին պետք է անցկացնենք ավագանու արտահերթ ընտրություններ եւ հաստատենք ժողովրդավարության իշխանություն, որպեսզի Գյումրին ծաղկի այնպես, ինչպես, օրինակ, ծաղկում է Արթիկը, հանրապետության մյուս քաղաքները եւ, ընդհանուր առմամբ, Հայաստանն է ծաղկում»,- քարոզարշավի ժամանակ Գյումրիում հայտարարել էր Փաշինյանը: Այս հայտարարությունն իրավապահները որպես հերթական հրահանգ են ընկալել եւ Գյումրու իշխանությունների դեմ գործողություններ սկսել: Հունիսի 25-26-ին էլ ՏԿԵՆ-ն է դեսանտ իջեցրել Գյումրու համայնքապետարան: 2 օր քրքրել են՝ հատառհատ նայել փաստաթղթեր, ստուգել հաստիքացուցակները: Մեր աղբյուրից տեղեկացանք, որ հատկապես խոշորացույցով նայել են ֆինանսական եւ ճարտարագիտական բաժինները, ապա իրենց հետ տարել ինչ-որ «կասկածելի» փաստաթղթեր՝ հավելյալ ստուգման համար: Երեւանից եկածները գրեթե բառ չեն փոխանակել համայնքապետարանի աշխատողների հետ, մերժել են ցանկացած հյուրասիրություն: Հիշեցնենք, որ Գյումրու ընդդիմադիր քաղաքապետ Վարդան Ղուկասյանը 2025 թ. հոկտեմբերի 21-ից կալանքի տակ է՝ շորթման ու կաշառքի մեղադրանքով: Գործով անցնում է եւս 8 պաշտոնյա, այդ թվում՝ գլխավոր ճարտարապետը: Չնայած տոտալ ճնշումներին, Գյումրու ընդդիմությունն ամուր դիմադրություն է ցույց տալիս, եւ ՔՊ-ին չի հաջողվում ավագանու նիստերը տապալելով ճգնաժամ առաջացնել ու արտահերթ ընտրությունների գնալ: Մեր տեղեկություններով, չի բացառվում, որ քաղաքի կառավարումն առաջիկայում ստանձնի Մարտուն Գրիգորյանի «Մեր քաղաքը» դաշինքը, որը նոր անդամով է համալրվել: Հուլիսի 3-ին ավագանու արտահերթ նիստ է նշանակված:

Հունիսի 7-ի գիշերը, ըստ ՔՊական աղբյուրի, Փաշինյանը մի խումբ մերձավորների հետ արդյունքների հաշվարկին հետեւել է ոչ թե ՔՊ կենտրոնական գրասենյակից, այլ՝ կառավարական առանձնատնից: Կեսգիշերն անց, երբ իրավիճակը դանդաղ բարդանում էր, Փաշինյանն ու թիմակիցները հասկացել են, որ ընտրությունների արդյունքներն իրենց օգտին չեն զարգանում, եւ մինչեւ լուսաբաց իրավիճակը կարող է անշրջելի դառնալ, ֆորսմաժորային որոշում են կայացրել, որ Փաշինյանն ասուլիս տա ու հայտարարի, որ հաղթել են ու միանձնյա իշխանություն են ձեւավորելու, մնացածը՝ հետո կերեւա: Մենք գրել էինք, որ շտաբում գտնվողների մեծ մասն ապշել է Փաշինյանի անսպասելի հայտարարությունից եւ թեթեւացած շունչ քաշել, որ «շեֆը լուծումը գտավ»:

Սա դեռ սկիզբն է

Դուք նկատեցի՞ք՝ ինչ արագությամբ, հենց հունիսի 8-ին, Երեւանի փողոցներից անհետացան կանաչապատման եւ սանմաքրման աշխատակիցները, որոնք մինչեւ հունիսի 7-ը՝ համազգեստները հագին, եռանդով մաքրում էին փողոցները, ջրում-քաղհանում կանաչ տարածքները: Նկատեցի՞ք՝ ինչպես հանկարծ դադարեցին ասֆալտապատման, փոսալցման, սալիկներ փոխելու եւ քաղաքի նորոգման մյուս բոլոր աշխատանքները, որոնք եռանդով իրականացվում էին նախընտրական շրջանում: Իսկ արձանագրեցի՞ք, թե ինչ արագությամբ նվազեցին առողջապահական անվճար ծառայությունները, ինչ արագությամբ սկսեցին խոսել համավճարների, անվճար դեղերի բացակայության մասին, եւ վիրահատվողների հերթեր գոյացան: Լսեցի՞ք, որ հանրապետությունով մեկ կրճատել են նպաստառուների ցուցակները՝ հայտարարելով, որ 10 հազարով թոշակի ավելացումը անապահովության միավորները նվազեցրել է, եւ հազարավոր մարդիկ հանրապետությունով մեկ զրկվել են իրենց նպաստից: Կարծում եմ՝ լսել եք նաեւ ակցիզային հարկի բարձրացման մասին, որով ծխախոտ, ալկոհոլ գնողների, բենզին գործածողների ծախսերն են մեծանալու: Հեռախոսների IMEL կոդերի կիրառումը եւս նոր հարկային բեռ է ավելացնելու՝ եւ բջջայիններ ներկրողների, եւ գնողների համար: Սա՝ ընդամենը 20 օրում: Դեռ ինչ՞ր ենք տեսնելու առաջիկայում: Ընտրություններից հետո այս իշխանությունը կամաց «պնդացնելու է ոտը»՝ նորանոր հարկեր է սահմանելու, նոր բեռ է ավելացնելու սպառողների ուսերին, խուսափելու է իր պարտականությունները կատարելուց, բայց պարտադրելու է ՀՀ քաղաքացիներին, որ սրբորեն կատարեն հարկատուի, քաղաքացու իրենց պարտականությունները: Այս ամենի մասին մենք զգուշացնում էինք ՀՀ ընտրողին՝ փորձելով բացատրել, որ չի կարելի նույն անձին երրորդ անգամ պաշտոնավարելու հնարավորություն տալ:

Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենի՝ Հայաստան սպասվելիք այսօրվա այցը մտահոգություններ է առաջացրել նաեւ իշխանական որոշ շրջանակներում: Ամիսներ առաջ եվրոպական ֆորումի անցկացմանն ու հատկապես Չելենսկու այցին հաջորդեցին ռուսական սանկցիաները՝ արտահանումների սահմանափակման տեսքով, ինչը կանխատեսել էին նաեւ ՔՊ թիմի որոշ սթափ անդամներ: Այժմ նույն մարդիկ կանխատեսում են, որ եվրոպացի տիկնոջ այցից հետո ՌԴ-ն սանկցիաների երկրորդ խոշոր փաթեթն ասպարեզ կբերի: Հուլիսի 1-2-ը եվրոպական պատվիրակության այցը, որին կմասնակցի նաեւ Մարթա Կոսը, ուրույն աջակցության ժեստ կլինի Նիկոլ Փաշինյանին՝ խորհրդարանական ընտրություններից հետո եւ ՍԴ որոշման հրապարակումից առաջ, սակայն դրա հետեւանքներն իր մաշկի վրա զգալու է ժողովուրդը, նախեւառաջ՝ տնտեսվարողները:

ԱՅԴ Ո՞Ր ՀԱՂԹԱՆԱԿՆ ԵՔ ՆՇՈՒՄ

Հունիսի 21-ին ՔՊ կուսակցության Իջեւանի տարածքային կառույցի անդամներն Իջեւանի «Քարվանասարա» ռեստորանում նշել են հունիսի 7-ի ընտրություններում ՔՊ-ի հաղթանակը: Իջեւանի բնակչուհի Լիլիթ Խաչատրյանը հունիսի 22-ին Ֆեյսբուքի իր էջում կարճ տեսանյութ է հրապարակել, որտեղ 16 տարեկաններն են՝ Թաթայի հայտնի երգի հնչյունների ներքո ուրախ պարում են, եւ գրել է. «Նշում ենք մեր հաղթանակը»: Ադրբեջանցիները գրավել են ՀՀ ինքնիշխան տարածքի մի հատված Տավուշից, Բաքվում հայ գերիներն են խոշտանգվում, Կիրանցի հողերը սահմանազատումով հանձնել են Ադրբեջանին, իսկ Տավուշի այն հողերը, որոնք Ադրբեջանի վերահսկողության տակ են, եւ որը Կիրանցը հանձնելու օրերին խոստանում էին շուտով հետ ստանալ՝ չեն ստացել, բայց անզուսպ նշում են ՔՊ-ի հաղթանակը, որը, շատերի կարծիքով, հաղթանակ էլ չէ, այլ կեղծիքով, շանտաժով ու բռնությամբ կորզված արդյունք: Եվ անգամ այդքան ջանքերից ու ադմինիստրատիվ ռեսուրս կիրառելուց հետո էլ ընտրողների կեսից ավելին մերժել է իշխող կուսակցությանը:

ԾՐԱԳԻՐ

«ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՆ ՓՈԽԱՐԻՆԵՑԻՆ «ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ»

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

44-օրյա պատերազմից գրեթե 6 տարի անց Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագիր կնքված չէ: Եթե կնքված էլ լիներ, առանց միջազգային հզոր երաշխավորների կամ առանց ռազմական հավասարակշռության հաստատման, Ադրբեջանի հետ արդար, հարատեւ խաղաղություն չի լինելու՝ սա բոլորն են հասկանում: Սակայն Նիկոլ Փաշինյանի իշխանությունը, այս իրողությունն անտեսելով, համառորեն հայտարարում է, որ խաղաղությունն արդեն հաստատվել է: Այդ տրամաբանության մեջ էլ պարտադիր զինծառայության ժամկետը 2 տարուց 1,5 տարի դարձրին՝ կրճատելով բանակի թվաքանակը: Իշխանությունը պայքարում է «ռեւանշիզմի դեմ»՝ հանրակրթական դպրոցներից հանվում են զոհված ազատամարտիկների լուսանկարների ցուցապաստառները, փառքի սրահները, հետիոտնի անցումներում ջնջում են զոհված հերոսների գրաֆիտի նկարները: Դրան գումարած՝ դպրոցական ծրագրում «Հայոց պատմությունը» փոխարինվել է «Հայաստանի պատմությամբ», հրաժարվել են Արարատ լեռան խորհրդանիշից եւ այլն:

Հիմա հերթը հասել է հանրակրթական դպրոցներում դասավանդվող «Նախնական զինվորական պատրաստություն» առարկային, որը խորամանկորեն են հանում դպրոցական ծրագրից՝ անունը փոխելով: ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը շրջաբերական է ուղարկել Երեւանի քաղաքապետի տեղակալին, մարզերի աշխատակազմերի գլխավոր քարտուղարներին՝ հայտնելով. «Տեղեկացնում եմ, որ 2026 թվականին հանրակրթության պետական չափորոշչում կատարված փոփոխություններով պայմանավորված՝ փոփոխվել են նաեւ «Ֆիզիկական կրթություն եւ անվտանգ կենսագործունեություն» բնագավառում ընդգրկված առարկաների դասավանդման մոտեցումները, համաձայն որոնց՝ «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան փոխարինվել է «Անվտանգ կենսագործունեություն» առարկայով, իսկ «Առողջ ապրելակերպ» խմբակը ներառվել է պարտադիր դասավանդվող առարկաների ցանկում: «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի փոխարինումը «Անվտանգ կենսագործունեություն» առարկայով եւ դրա բովանդակային վերանայումը միտված են առարկայական ոլորտն ավելի ընդգրկուն դարձնելուն, ինչպես նաեւ՝ սովորողների գործնական կարողությունների եւ հմտությունների զարգացմանը: Փոփոխությունների արդյունքում «Անվտանգ կենսագործունեություն» եւ «Առողջ ապրելակերպ» առարկաները ուսումնական հաստատություններում կներդրվեն փուլային եղանակով՝ 5-րդից մինչեւ 11-րդ դասարաններում: Նշված առարկաների ներդրումը կմեկնարկի 2026 թ. սեպտեմբերից՝ առաջին փուլում ընդգրկելով միայն 5-րդ եւ 10-րդ դասարանները: Մյուս դասարաններում մինչեւ փուլային ներդրման ամբողջական ավարտը կշարունակվի «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդումը, իսկ «Առողջ ապրելակերպ» խմբակը կդասավանդվի որպես պարտադիր խմբակ: Տեղեկացնում եմ նաեւ, որ «Անվտանգ կենսագործունեություն» առարկան դասավանդելու են ուսումնական հաստատությունների զինղեկները, որոնց պաշտոնեական պարտականությունները եւ նկարագրերը համապատասխան փոփոխությունների են ենթարկվել՝ համաձայն ՀՀ կառավարության 2023 թվականի N 216 Ն որոշման: Նշված կարգավորմամբ, ուսումնական հաստատության զինղեկը համարվում է շտաբի պետ եւ «Անվտանգ կենսագործունեություն» առարկայի ուսուցիչ: Մինչ նոր ուսումնական տարվա մեկնարկը «Անվտանգ կենսագործունեություն» առարկայի ուսուցիչների համար կկազմակերպվեն վերապատրաստումներ, որոնց ժամանակացույցի վերաբերյալ տեղեկատվությունը կտրամադրվի ի լրումն»:

ԿԳՄՍ նախարարի տեղակալը Երեւանի փոխքաղաքապետին ու մարզպետների աշխատակազմերի գլխավոր քարտուղարներին խնդրել է հանձնարարական տալ համապատասխան ստորաբաժանումներին, որ 1-օրյա ժամկետում ուսումնական հաստատություններին, իսկ այդ հաստատությունները զինղեկներին 1-օրյա ժամկետում սույն շրջաբերականը տրամադրեն:

Այս շրջաբերականը Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների զինղեկների մոտ անհանգստություն է առաջացրել: Սկսվում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դուրսբերումը դասավանդվող առարկաների ցանկից, ինչն աստիճանաբար են անում: Իսկ «Անվտանգ կենսագործունեություն» առարկայի դասագիրք գոյություն չունի: Այս առարկան անվտանգության կանոնների պահպանման մասին է՝ էլեկտրական հոսանքի, բնական գազի հետ առնչվելիս, ինչպես նաեւ աղետների ժամանակ անձի գործելակերպին է առնչվում: Դպրոցների զինղեկները նաեւ վարում են 15-17 տարեկան տղաների զինվորական հաշվառման փաստաթղթերի թղթապանակները, որոնք նրանք հանձնում են տարածքային զինկոմիսարիատներ: Զինղեկները չգիտեն՝ շարունակելո՞ւ են այդ փաստաթղթերի պատրաստումը, դրա համար շարունակելո՞ւ են վարձատրվել, թե՝ ոչ: Տավուշի սահմանամերձ դպրոցների զինղեկների աշխատավարձը մոտ 130 հազար դրամ է, որի մեջ մտնում է զինղեկության ամբողջական դրույքը, դրան գումարած քաղպաշտպանության համար մոտ 40 հազար դրամ վճարը: Զինղեկները մտավախություն ունեն, որ իրենց ոչ մեծ աշխատավարձերն էապես նվազելու են:

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՄԻՖՆ ՈՒ ՀԱՅ ԳՅՈՒՂԱՑՈՒ ՀԱՄԱՐ ՅԱՎՈՏ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

Ռուսաստանն այս տարվա մայիսից սկսեց փուլ առ փուլ սահմանափակել Հայաստանից մի շարք ապրանքների ներմուծումը՝ դա պատճառաբանելով ֆիտոսանիտարական պահանջների խախտումներով: Սկզբում արգելքը վերաբերում էր ծաղիկներին, այնուհետեւ՝ լոլիկին, վարունգին, պղպեղին, ելակին, ծիրանին, դեղձին, սալորին, կեռասին, խաղողին, կարտոֆիլին, սմբուկին չրերին, ձկներին եւ այլն: Սահմանափակումների վերջին փուլն ուժի մեջ մտավ հունիսի 12-ից, երբ «Ռոսսելխոզնադզորն» արգելեց Հայաստանից ծագող եւ արտահանվող ամբողջ կարանտինային բուսական արտադրանքի ներմուծումն ու Ռուսաստանի տարածքով տարանցումը՝ մինչեւ նոր վերահսկողական մեխանիզմների ներդրումը:

«Հրապարակն» ուսումնասիրել է շուկան, արտահանման նոր ուղղություններն ու խնդիրները: Որ երկրներ ինչ ապրանքատեսակներ են արտահանվել վերջին օրերին՝ հունիսի 1-15-ն ընկած ժամանակահատվածում: Ըստ պաշտոնական տվյալների, Հայաստանից ֆիտոսանիտարական բեռներ արտահանվել են 16 երկիր՝ ԱՄԷ, Լատվիա, Վրաստան, Ուզբեկստան, Ուկրաինա, Բուլղարիա, Իրան, Նիդեռլանդներ, Ռումինիա, Ավստրիա, Բելառուս, Կիպրոս, Ղազախստան, Չեխիա, Ֆրանսիա եւ ԱՄՆ: Մեր գրավոր հարցմանն ի պատասխան՝ հայտնել են Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնից: Ըստ ՍԱՏՄ-ի, արտահանվել են բողկ, դդմիկ, ելակ, թութ, թուրինջ, լոլիկ, ծաղիկ, ծիրան, կանաչի, կեռաս, կիտրոն, համեմունք, պղպեղ, սալոր, սմբուկ, սոխ, սունկ, սուրճ, վարունգ, տնկիներ եւ քաղցր սուշուխ: Միայն 14 ապրանքատեսակ արտահանվել է ԱՄԷ: Նշված երկրներից գրեթե բոլոր երկրներ արտահանվել է ծաղիկ: Սակայն պատահական չէ, որ ՍԱՏՄ-ն արտահանման ծավալների մասին տվյալներ չի տալիս, քանի որ նշված ճոխ ցանկի մեծ մասն ընդամենը մի քանի կիլոգրամ կամ մի քանի հազար հատ ապրանք է, որն արտահանում համարելը մեղք կլինի:

ԱՐՏԱԴՐՈ՞ՂՆ Է ԳՏՆՈՒՄ ՇՈՒԿԱ, ԹԵ՞ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ Է ԱՋԱԿՑՈՒՄ

Այս հարցում էլ արտադրողը երաշխավորված պետական աջակցություն չունի: Նա ոչ միայն պետք է զբաղվի արտադրությամբ, այլ նաեւ արտադրանքի իրացման ուղիներ գտնի: Մեր հարցմանն ի պատասխան, էկոնոմիկայի նախարարությունից հայտնել են, որ «ընդհանուր տրամաբանությամբ եւ շուկայական հարաբերությունների սկզբունքով՝ արտահանման թիրախային շուկաների վերջնական ընտրությունը, սեփական արտադրանքի մրցակցային առավելությունների գնահատումը, ֆինանսական ռիսկերի հաշվարկն ու գործընկերների որոնումը հանդիսանում են անհատ ձեռնարկատիրոջ կամ ընկերության անմիջական գործառույթը, բիզնեսն ինքնուրույն է իրականացնում իր ապրանքատեսակին համապատասխանող շուկաների մարքեթինգային վերլուծություն եւ թիրախավորում»: Նախարարությունից նաեւ հայտնել են, որ ներկայում, երբ ավանդական արտահանման շուկաներում ի հայտ են եկել «աշխարհաքաղաքական եւ լոգիստիկ խնդիրներ», արտահանման ուղղությունների դիվերսիֆիկացումը վերածվել է ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության առաջնահերթության: Եվ պետությունը, ի դեմս էկոնոմիկայի նախարարության, «գործադրում է իր տնտեսական եւ դիվանագիտական գործիքակազմը՝ խնդրի արագ եւ արդյունավետ լուծման համար»: Թե ինչում է դա արտահայտվում, բացի ամպագոռգոռ բառեր ասելուց, պարզ չէ:

ՈՐ ԴԵՊՔՈՒՄ Է ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄ

Մի շարք պաշտոնյաներ իրար հերթ չտալով հայտարարում էին, որ գյուղացին մենակ չի մնացել՝ պետությունը գյուղացու կողքին է, որ կառավարության ընդունած որոշումներով նախատեսվում է սուբսիդավորում իրականացնել: Իհարկե, սուբսիդավորում նախատեսվում է, բայց կա մեկ «բայց»: Կառավարության կողմից հունիսի 4-ի N 800-Լ, հունիսի 11-ի N 839-Լ, N 803-Ն որոշումների շրջանակներում փոխհատուցումը տրամադրվում է բացառապես փաստացի արտահանված ապրանքների համար: Ստացվում է, որ այն արտադրողը, որը չի կարողանում շուկա գտնել, քանի որ տարիներով իր արտադրանքն արտահանել է Ռուսաստան եւ արտահանման այս ճանապարհի անհնարինությամբ պայմանավորված՝ պետք է նոր ուղիներ փնտրի, ինչն անգամ պետական մակարդակով է բարդ ու ժամանակատար գործընթաց, չի սուբսիդավորվելու պետության կողմից, քանի որ չունի ապրանքների իրացված խմբաքանակ: Մեկ տողով ասած՝ չիրացված արտադրանքը գյուղացու խնդիրն է, իսկ դրա դիմաց փոխհատուցումը՝ 0:

ՈՒՐ ԵՆ ՏԱՆՈՒՄ, ՄԵՐԺՎԱԾ ԲԵՌՆ ԻՆՉ ԵՆ ԱՆՈՒՄ

Նոր շուկաների դեպքում ռիսկայնությունը մեծ է: Այնպես որ, անգամ արտահանված բեռը կարող է ՀՀ վերադարձվել, կամ արտահանված երկրում ոչնչացման անհրաժեշտություն կարող է առաջանալ, քանի որ արտահանման նոր շուկաներն ունեն իրենց պահանջներն ու ստանդարտները, եւ հայկական արտադրանքը միշտ չէ, որ համապատասխանում է այդ չափանիշներին: Բեռի խմբաքանակի չընդունման, ոչնչացման կամ Հայաստան հետ վերադարձնելու բոլոր ծախսերը հոգում է արտահանող տնտեսվարողը: Իսկ թե որ երկրներ է արտահանվում հայկական գյուղմթերքը, մեզ ասացին՝ ապրանքը ցամաքային ճանապարհով Հայաստանից՝ Վրաստանով եւ Թուրքիայով գնում է դեպի եվրոպական կամ Մերձավոր Արեւելքի երկրներ, Հայաստանից Իրանի տարածքով՝ դեպի Մերձավոր Արեւելքի կամ ասիական եւ միջինասիական երկրներ:

Սեդա Սաֆարյանը գլխի չի ընկնում, թե որտեղ է գտնվում

Սահմանադրական դատարանում շարունակվում է հունիսի 7-ի ընտրությունների արդյունքների վիճարկման գործով նիստը: Հետեւելով ՍԴ նիստին՝ տպավորություն ենք ստանում, որ բարձր դատարանի դատավորները չեն ցանկանում անգամ անաչառության եւ օբյեկտիվության իմիտացիա ստեղծել: Նրանք արդեն իսկ ցույց են տալիս, թե ինչ որոշում են կայացնելու, եւ իրենց պահում են այնպես, ինչպես կպահեր ՔՊ կուսակցության ներկայացուցիչը՝ պաշտպանելով իրենց ընտրվելու «իրավունքը»: Չմոռանանք, որ դատարանի այս կազմն ամբողջությամբ նշանակվել է Նիկոլ Փաշինյանի կողմից, իսկ նրանցից, օրինակ, Սեդա Սաֆարյանը կառավարության նիստում՝ ՍԴ դատավոր նշանակվելու օրը, խոստացել էր ամեն ինչ անել, որպեսզի Նիկոլ Փաշինյանին չհիասթափեցնի՝ արդարացնի նրա հույսերը:

Նախկին դատավոր, փաստաբան Աննա Փիլոսյանը, մեզ հետ զրույցում անդրադառնալով ՍԴ քննությանը, ասաց. «Ես, անկեղծ ասած, Սահմանադրական դատարանից չունեմ մեծ սպասելիքներ, ինչո՞ւ. որովհետեւ ՍԴ կազմը գերքաղաքականացված կազմ է, ունի ծայրահեղ պրոիշխանական անդամներ, եւ չեմ կարծում, որ նման դատավորներից կարելի է դրական բան սպասել՝ դիմումների բավարարման տեսանկյունից: Սահմանադրական դատարանը, հավանաբար, մշտապես էլ ունեցել է քաղաքականացվածության աստիճան, սակայն խնդիրն աստիճանի չափն է, ես չեմ կարծում, որ ՍԴ-ն այս աստիճան քաղաքականացված է եղել: Այնուամենայնիվ, ՍԴ քաղաքականացվածության ամենավառ պատկերն ունենք այս պահին»:

Նախկին դատավոր **Պարգեւ Օհանյանն** էլ, որ ժամանակին ՍԴ-ում ներկայացրել է ընդդիմության շահերը, խոսելով այս թեմայի մասին, նկատեց. «ՍԴ դատավորները չունեն իրավունք՝ նիստը քաղաքականացնելու: Սեդա Սաֆարյանը գլխի չի ընկնում, թե որտեղ է գտնվում: Ցավոք, Սեդա Սաֆարյանի՝ ՍԴ դատավոր նշանակվելու հանգամանքն ինքնին քաղաքական է, նա դատավոր է դարձել ոչ թե իր մասնագիտական արժանիքների համար, այլ՝ քաղաքական որոշմամբ: Նա փորձում է արդարացնել իրեն: Նա ընդգծված հակակրանք ունի այսօրվա ընդդիմության նկատմամբ եւ դա չի էլ փորձում թաքցնել: Փոխարենը համակրում է իշխանություններին եւ բացահայտ ի ցույց է դնում այս փաստը: Բայց նա միակը չէ, շատերն են իր նման: Այս տեսակը համարում է, որ պարտավոր է ընդգծված վարքագծով հավատարմության երդում տալ Նիկոլ Փաշինյանին: Ես կարծում եմ, որ առաջներում երբեք ՍԴ-ն այս աստիճան քաղաքականացված չի եղել, գուցե եղել է, բայց ո՛չ այս աստիճան: Ցավոք, բոլոր իշխանություններն էլ ձգտել են դատական համակարգը վերահսկել, դա նորություն չէ, բայց այսպիսի պատկեր երբեք չի եղել»:

ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ՔՊ-ՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Ինչ ընդդիմությունը Սահմանադրական դատարանում վիճարկում է հունիսի 7-ի ընտրությունների արդյունքները, իշխանական թիմը շտապում է դեռեւս չձեւավորված խորհրդարանի ղեկավար կազմ «ընտրել» հենց «Քաղպայմանագիր» կուսակցության վարչության նիստում: Արդեն հայտնի է, որ ՔՊ վարչությունը խորհրդարանի խոսնակի նախագահի թեկնածու է ընտրել Ռուբեն Ռուբինյանին, փոխխոսնակների՝ Վահագն Ալեքսանյանին եւ Հայկ Կոնջորյանին, վերջինը նաեւ ԱԺ նախագահի համար էր իր թեկնածությունն առաջադրել, բայց չընտրվեց: Առաջիկա օրերին էլ ՔՊ վարչությունը խմբակցության ղեկավար կընտրի:

Երեկվա դրությամբ խմբակցության ղեկավարի պաշտոնին առաջադրվել էր Արուսյակ Մանավազյանը, որը ներկայում կուսակցության աշխատակազմի ղեկավարն է՝ Փաշինյանի աչքն ու ականջը խմբակցությունում, ինչպես նաեւ՝ ֆինանսները տնօրինողը: Մանավազյանը երկար տարիներ եղել է «Հայկական ժամանակի» եւ Փաշինյանի տպարանի գլխավոր հաշվապահը, ապա՝ կառավարական առանձնատների տնօրենը եւ հիմա էլ, ըստ լուրերի, մասնակցում է Փաշինյանի ընտանեկան ֆինանսական շարժերին: Սակայն իշխանական թիմում կարծում են, որ Փաշինյանի ֆավորիտն այս պաշտոնի համար նրա անգլերենի նախկին ուսուցչուհին՝ ԱՄՆ-ում ՀՀ նախկին դեսպան Լիլիթ Մակունցը, որին ընտրություններից առաջ անգամ ԱԺ նախագահի պաշտոնի համար էին դիտարկում, սակայն այդ պաշտոնը, նաեւ դրսից եկած պահանջով, հանձնվելու է Ռուբեն Ռուբինյանին: Թիմում վստահ են, որ Ռուբինյանի՝ ԱԺ նախագահ դառնալու հարցում բացառապես արտաքին գործոնն է դերակատարում ունեցել: Հակառակ դեպքում Փաշինյանն Ալեն Սիմոնյանին «այսպես նագլի չէր գցի»՝ կարծում են թիմակիցները, եւ, նրանց կարծիքով՝ ծույլ եւ անհավասարակշիռ Ռուբինյանին առաջ չէր մղի: Հատկապես որ Սիմոնյանը, ըստ թիմակիցների, ոչ միայն անձնուրաց ծառայել է Փաշինյանին ու թիմին, այլեւ բալանսավորված արտաքին հարաբերությունների կողմնակից է: Չնայած՝ Փաշինյանի պասով պարբերաբար կսմիթներ է ուղղել ՌԴ-ի հասցեին, բայց ընդունելի անձ էր ռուս գործընկերների համար: Մինչդեռ Ռուբինյանը դառնալու է թուրք-ադրբեջանական տանդեմի սպասարկուն եւ ակնհայտ ռուսաֆոբ է:

Ոմանք հիշում են, որ 2018 թ. իշխանափոխությանը հաջորդած խորհրդարանական առաջին ընտրություններից հետո, երբ իշխող թիմը կրկին խորհրդարանական պաշտոններ բաշխելու գործընթացի մեջ է եղել, վարչության նիստում Տիգրան Ավինյանը բարձր պաշտոններից մեկի համար առաջարկել է Ռուբեն Ռուբինյանին, սակայն վարչապետի պաշտոնը զբաղեցնող Փաշինյանը չի թաքցրել նրա նկատմամբ իր վերաբերմունքը եւ մի արտահայտություն է արել, թե Ռուբինյանը 6-7 ամիս արտաքին գործերի փոխնախարար էր, ինչ է արել, որ էս մարդուն ուզում եք ավելի բարձր պաշտոնի կարգել: Այսինքն, գրեթե ուղիղ տեքստով ասել է, որ Ռուբինյանն աշխատող չէ եւ չի կարող ղեկավար, պատասխանատու պաշտոն զբաղեցնել:

Իհարկե, 18-ից ի վեր շատ բան է փոխվել, եւ շատ հարցերում է Փաշինյանը փոխել իր դիրքորոշումը, բայց թիմում վստահ են, որ Ռուբինյանի հարցում դիրքորոշման փոփոխությունը բացառապես արտաքին ազդեցությամբ է պայմանավորված: Նույն հանգամանքով են ՔՊ-ում պայմանավորում նաեւ խմբակցության ղեկավարի նշանակումը, որ դա լինելու է ամերիկյան քաղաքականության կրող Մակունցը, թեպետ թիմում նրա դեմ մեծ հակաքարոզչություն է գնում:

ՔՊ-ում նաեւ վստահ են, որ Ալեն Սիմոնյանը շարքային պատգամավորի կարգավիճակով չի գնա խորհրդարան, նախ՝ անչափ վիրավորած է թիմից ու Փաշինյանից եւ վարչությունում ընտրություններից հետո էլ չի կարողացել թաքցնել զգացմունքները ու արագ դուրս է եկել ՔՊ գրասենյակից՝ թիմակիցների կողմը նետելով, որ «լավ էլ անկեղծ են»: Երկրորդ. նա խորհրդարանի առաջին խոսնակն է, որ ամբողջ ժամկետ պաշտոնավարել է, ուստի պետությունը պարտավոր է ապահովել իր անվտանգությունը, նա «ախրանայով» դժվար թե գա, նստի շարքային պատգամավորի աթոռին, իսկ եթե գա, ապա դա կլինի միայն Փաշինյանի կոշտ պարտադրանքով ու ինչ-որ խոստմամբ:

Ինչ վերաբերում է ԱԺ մշտական հանձնաժողովների նախագահների եւ փոխնախագահների ընտրությանը, ապա, ըստ ամենայնի, դա կթողնվի խմբակցությանը, չնայած էլի Փաշինյանը կհրահանգավորի: Խոսակցությունների համաձայն, Արուսյակ Ջուլհակյանը, Բաբկեն Թունյանը կշարունակեն ղեկավարել պետահիրավական եւ տնտեսական հանձնաժողովները, իսկ պաշտպանության եւ անվտանգության մշտական հանձնաժողովը հնարավոր է Անդրանիկ Քոչարյանից վերցնեն՝ տան Արմեն Խաչատրյանին: Ընդդիմությանն էլ կգիջեն այն հանձնաժողովները, որոնք նախորդ խորհրդարանում էին զիջել:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՓԱՇԻՆՅԱՆԻՆ ՊԵՏՔ ԵՆ ՄԱՐԴԻԿ, ՈՎՔԵՐ ԻՐԵՆԻՑ ԱՎԵԼԻ ՆԻԿՈԼ ԵՆ

Երկուշաբթի օրը պարզ դարձավ, որ ՔՊ-ն ԱԺ նախագահի տեղակալի թեկնածուներ է ընտրել Հայկ Կոնջորյանին եւ Վահագն Ալեքսանյանին: Այդ մասին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության նիստից դուրս գալուց հետո՝ նույն օրը հայտարարեց Նիկոլ Փաշինյանը: Լրագրողների հարցին, թե ինչու ԱԺ նախագահի տեղակալի պաշտոնում կուսակցությունը կին թեկնածու չի առաջադրել, Փաշինյանն ասաց, որ ընտրությունն անցկացվել է փակ, գաղտնի քվեարկությամբ:

«Մեզ մոտ փակ, գաղտնի քվեարկություն է եղել, չեմ կարող ասել: Բայց այդ խնդիրը չենք տեսնում: Երբ ասում ենք՝ պետք է հավասարություն լինի, նշանակում է, որ պետք է լինեն հավասար մրցակցային պայմաններ»,- նշել է Փաշինյանը: Նրա խոսքով՝ քննարկվել է նաեւ կանանց համար առանձին քվոտա սահմանելու հարցը, սակայն որոշվել է դա չանել: «Քննարկվել է՝ արդյոք պե՞տք է քվոտա սահմանենք, որ անպայման մեկ կին եւ մեկ տղամարդ ընտրվեն: Որոշվել է, որ քվոտա չսահմանենք եւ քվեարկությունն ազատ թողնենք»,- ասել է նա: Անդրադառնալով ՔՊ խմբակցության ղեկավարի ընտրությանը՝ Փաշինյանը նշել է, որ այդ հարցով դեռ որոշում չկա: Հիշեցնենք, որ ՔՊ կուսակցության վարչության նիստում հունիսի 25-ին փակ, գաղտնի քվեարկության արդյունքում ԱԺ նախագահի թեկնածու էր ընտրվել Ռուբեն Ռուբինյանը: Առաջին պլան բերված ՔՊ-ականներից մի բան է պարզ դառնում, որ Նիկոլ Փաշինյանը մարդկանց առաջ քաշելու կարեւոր նախապայման է համարում հայհոյախոս, անդաստիարակ, անմակարդակ, ագրեսիվ, չար ու անգրագետ լինելը:

Արդյունքում՝ Ազգային ժողովը տարեցտարի գահավիժում է: Ամեն անգամ թվում է, որ սրանից ավելի վատ կազմ դժվար է պատկերացնել, բայց արի ու տես, որ ամեն անգամ Նիկոլ Փաշինյանը «զարմացնում է»: Նախկին ՔՊ-ական **Հակոբ Ասլանյանը**, մեզ հետ զրույցում անդրադառնալով առաջին պլան բերված ՔՊ-ականների կեցվածքին եւ արժանիքներին, ասում է. «Պետք է արձանագրել, որ Նիկոլ Փաշինյանին պետք են մարդիկ, ովքեր իրենից ավելի Նիկոլ են: Բնական է, որ գնալով ԱԺ-ի որակը պետք է ընկներ: Ինչո՞ւ. որովհետեւ ընտրությունները ցույց տվեցին, որ Նիկոլ Փաշինյանը որակազրկվել է, իսկ որակազրկված հրամանատարն իրենից ավելի որակազրկված մասսային պետք է առաջին պլան բերի: ՔՊ-ում մատների վրա կարելի է հաշվել խելոք մարդկանց: Եթե ընդդիմությունը մանդատները չվերցնի, ապա շատ կարճ ժամանակ անց ՔՊ-ական Ազգային ժողովը հանրության առաջ լրիվ մերկ կներկայանա: Նախորդ ԱԺ-ի պատկերն էլ գրեթե նույնն էր, սակայն հիմա որակն ավելի է ընկել, որովհետեւ Ազգային ժողովը «բեսեդկայի» տրամաբանությունից դուրս չի եկել: Նույն Վահագն Ալեքսանյանը եւ մյուսները եթե դադարեն նախկինների վրա ցեխ շպրտել, մեղադրել բոլորին եւ այլն, ապա մարդիկ հանկարծ կնկատեն, որ նրանց խոսքում չկա բացարձակապես որեւէ միտք: Նրանցից շատերը չեն պատկերացնում, թե ինչի համար է Ազգային ժողովը: Եթե Նիկոլը թույլ չի տալիս, որ ԲՀԿ-ն մտնի խորհրդարան, ապա ՔՊ-ականներին մերկացնելու մեկ տարբերակ կա՝ ընդդիմությունը պետք է մանդատներից հրաժարվի: Սրանք ո՛չ քաղաքական գործիչներ են, ո՛չ էլ պրոֆեսիոնալներ են»:



Նյութերը՝ Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ՃԱՆԱՉՈՒՄ

Իսրայելի կառավարությունը միաձայն հավանություն է տվել Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելու ԱԳ նախարար Գեդեոն Սաարի ներկայացրած նախագծին: Քաղաքագետ **Սուրեն Սուրենյանցը**, սակայն, կարծում է, որ այս հարցը դիտարկելիս պետք է բացառել զգացմունքային մոտեցումները եւ կայացված որոշումը դիտարկել որպես ռազմաքաղաքական իրողությունների արդյունք:

ԴԺՎԱՐ ԹԵ ՀԱՅԱՍՏԱՆՆ ՕԳՏՎԻ ԱՅՍ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ

«Այս քայլը վկայում է Իսրայել-Թուրքիա հարաբերությունների խոր ճգնաժամի մասին, ինչը խոսում է ավելի քան մեկ դար առաջ տեղի ունեցած ողբերգության նկատմամբ Իսրայելի վերաբերմունքի էական փոփոխության մասին: Տասնամյակներ շարունակ Թել Ավիվը խուսափում էր Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչումից՝ չվտանգելու համար Անկարայի հետ ռազմավարական հարաբերությունները: Այսօր այդ հարաբերությունները հասել են պատմական նվազագույն մակարդակի, եւ նույն հարցն արդեն վերածվել է Թուրքիայի նկատմամբ քաղաքական ճնշման գործիքի: Թուրքիան 2024-ին կասեցրել է Իսրայելի հետ ողջ առեւտուրը, նույն թվականի նոյեմբերին Թուրքիայի նախագահը հայտարարել է դիվանագիտական հարաբերությունները խզելու մտադրության մասին, իսկ Գազայի պատերազմի ընթացքում Անկարան հետեւողականորեն պահպանել է կոշտ հռետորաբանություն, աջակցել ՀԱՄԱՍ-ին եւ միացել Իսրայելի դեմ միջազգային իրավական նախաձեռնություններին: Հետեւաբար, կառավարության որոշումը պայմանավորված է ոչ այնքան պատմական արդարության գաղափարով, որքան ներկայիս աշխարհաքաղաքական հաշվարկներով: Եթե քաղաքական միջավայրը փոխվի, չի կարելի բացառել, որ Իսրայելի օրակարգում այս թեման կորցնի իր առաջնահերթությունը: Երկրորդ. Իսրայելը շարունակում է Հոլոքոստը դիտարկել որպես մարդկության պատմության բացառիկ ողբերգություն: Հենց այս մոտեցումն է երկար տարիներ ձեւավորել Թել Ավիվի զգուշավոր քաղաքականությունը Հայոց ցեղասպանության հարցում՝ սահմանափակելով մյուս ցեղասպանությունների նկատմամբ համարժեք քաղաքական գնահատականների ձեւավորումը»,- ասում է Սուրենյանցը:

Ինչ վերաբերում է Ադրբեջան-Իսրայել փոխհարաբերություններին, ապա նույնիսկ եթե Կնեսետն ընդունի Հայոց ցեղասպանության ճանաչման նախագիծը, դժվար թե դա ազդի Ադրբեջան-Իսրայել ռազմավարական գործընկերության բնույթի վրա: «Իսրայել-Ադրբեջան փոխհարաբերությունները հիմնված են անվտանգության, հետախուզական, էներգետիկ եւ ռազմատեխնիկական համագործակցության վրա եւ կարեւոր դեր են խաղացել ինչպես 44-օրյա պատերազմի, այնպես էլ հետպատերազմյան տարածաշրջանային իրողությունների ձեւավորման գործընթացում: Հետեւաբար, Հայոց ցեղասպանության ճանաչումը, ամենայն հավանականությամբ, չի ազդի այդ ռազմավարական դաշինքի հիմքերի վրա: Բացի այդ, Իսրայելն այսօր շարունակում է Իրանի նկատմամբ իր ագրեսիվ քաղաքականությունը: Այդ դիմակայության հետագա խորացումը կարող է նոր ռիսկեր ստեղծել Հարավային Կովկասում, որոնց բացասական ազդեցությունից Հայաստանը չի կարող մնալ անմասն: Հետեւաբար, Երեւանը պարտավոր է այս գործընթացները գնահատել ոչ միայն պատմական արդարության, այլեւ ազգային անվտանգության տեսանկյունից: Եթե Իսրայելի կառավարության որոշումը հաստատվի նաեւ Կնեսետի կողմից, այն կարող է որոշ չափով սահմանափակել Թուրքիայի եւ Իսրայելի միջեւ մանեւրելու Ադրբեջանի հնարավորությունները: Սակայն դժվար է ակնկալել, որ Հայաստանը կկարողանա լիարժեք օգտվել այդ նոր իրավիճակից, քանի դեռ արտաքին քաղաքականությունը շարունակում է տառապել սահմանափակ սուբյեկտությունից, նախաձեռնողականության պակասից եւ ռազմավարական մտածողության ճգնաժամից»,- նկատում է Սուրենյանցը:

Քաղաքագետ **Էդուարդ Աբրահամյանն** էլ կարծում է, որ Իսրայելում փայլուն ռազմագետներ են նստած. «Ճանաչելով Հայոց ցեղասպանությունը ճիշտ ժամանակին ու ճիշտ հաշվարկով, իսրայելական կառավարող էլիտան գնում է այս որոշմանը, երբ Իսրայել-Թուրքիա հակամարտությունը հասունանում է, եւ Թուրքիան զսպելու նպատակով հասունանում է Իսրայել-Ֆրանսիա–Կիպրոս-Հունաստան այլանսի ձեւավորումը՝ մյուս կողմից: Թուրքիայի ներկայի ու անցյալի վերաբերյալ բոլոր չորսն էլ ունեն հստակ դիրքորոշում»,- նշում է նա: Քաղաքագետ Արման Գրիգորյանի կարծիքով՝ հստակ է, որ սա Իսրայելի կողմից օգտագործվում է որպես գործիք Թուրքիայի հետ իրենց հակամարտության կոնտեքստում: «Յուրահատուկ ցինիզմ է Իսրայելի կողմից նման օրինագիծ քննարկելը, երբ նրանք Ադրբեջանի մերձավոր դաշնակիցն են եղել հայ-ադրբեջանական կոնֆլիկտում ու մեծ դերակատարում են ունեցել հայերի դեմ Ադրբեջանի հաղթական պատերազմի ու Արցախի հայաթափման մեջ: Հստակ է, վերջապես, որ Իսրայելի կողմից նման օրինագծի քննարկումը շատերի մոտ դառը քմծիծաղից բացի ոչինչ չի հարուցում, քանի որ Իսրայելը՝ ինքը, հենց հիմա իրականացնում է մի բան պաղեստինցիների դեմ, ինչի համար պատրաստվում է դատապարտել Թուրքիային»,- նկատում է Գրիգորյանը:

Ցեղասպանության ճանաչման նախագծին կոշտ են արձագանքել ոչ միայն Անկարայում, այլեւ՝ Բաքվում: https://minval.az-ի փոխանցմամբ, Ադրբեջանի ԱԳՆ-ն հայտարարել է, որ Իսրայելի կառավարության կողմից, ինչպես իրենք են նշում՝ «այսպես կոչված» հայոց ցեղասպանության նախագծի ճանաչումը լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս: Ադրբեջանի ԱԳՆ-ի տարածած հայտարարության մեջ ասվում է, որ նման քայլերը չեն նպաստում համերաշխության հաստատմանն ու փոխըմբռնմանը, ընդհակառակը՝ գոյություն ունեցող հակասություններն էլ ավելի են սրում եւ խոչընդոտում տարածաշրջանում կայուն խաղաղության հաստատմանը: Սովորաբար, երբ Ադրբեջանի համար իրապես ցավոտ հարցեր են առաջանում, որոնք ուղիղ կապ ունեն Հայաստանի հետ, ադրբեջանական քարոզչամեքենայում դա դառնում է գլխավոր թեմա: Այնինչ, այս պարագայում ադրբեջանական քարոզչական տիրույթում մեծ հետաքրքրություն չի նկատվում՝ բացառությամբ Ադրբեջանի ԱԳՆ-ի տարածած հաղորդագրության: Գործընկեր Իսրայելի հարցում զգուշավորություն են ցուցաբերում եւ ձեռնպահ են մնում նրա քայլը քննարկելուց, ինչպես սովորաբար լինում է ուժեղ մրցակցի դեպքում: Ինչ վերաբերում է Փաշինյանի արձագանքին՝ Իսրայելի կառավարության այդ քայլին, ապա haqqin.az-ը գրել էր, որ Փաշինյանը որոշել է որեւէ կերպ չարձագանքել, ռեակցիա չտալ Իսրայելի այս որոշմանը: Ակնհայտորեն, նրանց սրտով է եղել Փաշինյանի լռությունը եւ հատկապես այն լղոզված հայտարարությունը, թե «Հայոց ցեղասպանության զենքայնացման թեմայի մեջ չմտնելը բխում է Հայաստանի Հանրապետության շահերից»: Ինչը նշանակում է, որ ՀՀ վարչապետն ամենուր պատերազմի վտանգ է տեսնում եւ անասելի վախենում է Թուրքիայից:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ՍԿՍԵՆՔ ՆՐԱՆԻՑ, ՈՐ «ԶԵՆՔԱՅՆԱՑՈՒՄ» ԲԱՌ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ՉԿԱ

Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, որ Իսրայելի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանն արձագանքելու կարիք չի տեսնում, քանի որ կարծում է՝ «Հայոց ցեղասպանության զենքայնացման թեմայի մեջ չմտնելը բխում է ՀՀ շահերից»: Հիշեցնենք, որ հունիսի 28-ին Իսրայելի կառավարությունը միաձայն հավանություն է տվել Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելու ԱԳ նախարար Գեդեոն Սաարի ներկայացրած նախագծին: Ստացվում է, որ Նիկոլ Փաշինյանն այնքան է սարսափում Ադրբեջանից եւ Թուրքիայից, որ անգամ «շնորհակալություն» բառն է վախենում արտաբերել՝ ուղղված Իսրայելին: Հետաքրքիր է՝ այսքանից հետո ՔՊ-ական ռեժիմը շարունակելո՞ւ է խոսել Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունից:

Քաղաքագետ, գրականագետ **Անուշ Սեդրակյանը**, «Հրապարակի» հետ զրույցում խոսելով Փաշինյանի վախվորած հայտարարության մասին, նկատում է. «Նախ՝ սկսենք նրանից, որ «զենքայնացում» բառ հայերենում չկա, Փաշինյանը, հավանաբար, Weaponize հասկացության մասին էր խոսում, որն անգլերենից թարգմանաբար նշանակում է՝ վերածել զենքի, բայց ո՛չ զենքայնացնել: Նիկոլ Փաշինյանն Իսրայելին չի արձագանքում մեկ պարզ պատճառով՝ իրեն իշխանության են բերել ցեղասպանության հարցը փակելու օրակարգով: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը երբեք չէր գա իշխանության, եթե չլիներ ռուս-թուրքական դաշինքի պայմանավորվածությունը, առ այն, որ Փաշինյանը պետք է կատարի որոշակի կետեր ռուսական կողմի համաձայնությամբ, որոշակի կետեր՝ թուրքական կողմի համաձայնությամբ: Հիմա, ինչպես տեսնում ենք, այս մարդը ռուսական կողմի հանձնարարությունները ճշգրիտ կերպով չի կատարում, սակայն թուրքական կողմի պատվերները, որոնց մեջ ներառված են ցեղասպանության ուրացումը, Արցախի էթնիկ զտումը, Արցախի հարցի փակումը, Հայ առաքելական եկեղեցու վրա հարձակումը, հայ ժողովրդին սպառող, բութ կերպար դարձնելը, եւ այսպես շարունակ, փայլուն ձեւով կատարում է: Նիկոլ Փաշինյանն իշխանության է բերվել թուրք-ադրբեջանական ծրագրերի իրականացման համար: Եթե ես, օրինակ, իմ ֆեյսբուքյան էջում «Արեւմտյան Ադրբեջանի» մասին նյութ եմ տեղադրում, իմ էջում հայտնվում են տարբեր ՔՊ-ական բլոգերներ, ովքեր գրում են՝ «եւ այս կինը դասախոս է»: Ամբիոնի վարիչից անցանք, հիմա իմ դասախոս լինելն է նրանց թիրախում, բայց, այո, դասախոսները կոլաբորացիոնիստական բոլոր ռեժիմներում հարվածի տակ են հայտնվում: Ընդհանուր առմամբ, այսպես է՝ առաջին հարվածի տակ հայտնվում են ազգային գործիչները, երկրորդ հարվածի տակ՝ հոգեւորականները, իսկ երրորդ հարվածի տակ հայտնվում են մտավորականները: Նույն բանը եղավ այն ժամանակ, երբ բոլշեւիկները մտան Ռուսաստան, նույնը եղավ, երբ նացիստները մտան Լեհաստան եւ Ֆրանսիա եւ նույն բանն այսօր տեղի է ունենում Հայաստանում: Մենք գտնվում ենք կոլաբորացիոնիստների ավտորիտար ճնշման տակ»:

Բայց եթե Հայաստանը լիներ իրապես ինքնիշխան պետություն, եւ ռեժիմն առաջնորդվեր իր պետության շահով, ի՞նչ արձագանք պետք է տար Իսրայելին՝ ցեղասպանության ճանաչման համար: «Ես կասկածում եմ, որ արձագանքը կլիներ շատ բուռն, ինչպես, օրինակ, ժամանակին Ֆրանսիայի դեպքում եղավ, բայց հավատացնում եմ, որ Իսրայելի ճանաչումն ամենաարժեքավորն է համեմատության մեջ: Ոչ մեկի ներդրումը ես չեմ նվազեցնում, սակայն Իսրայելն այնքան մենաշնորհային է ցեղասպանության ճանաչման հարցում, այնքան է ինքն իրենով ուզուրպացրել այս հարցը, որ անգամ ԱՄՆ նախագահի խորհրդականը խոսում է այն մասին, որ Թուրքիան Իսրայելի համար ամենաէքզիստենցիալ վտանգն է ներկայացնում, եւ վերլուծության հեղինակը զարմանք է հայտնել, թե ինչու է Իրանը հայտնվել Իսրայելի թիրախում, այլ ոչ թե Թուրքիան»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՈՒՇԱԴՐՈՒՅՑ

ԵՐԲ ՉԳԻՏԵՍ ԻՆՉ ԱՆԵԼ, ԲԱՅՑ ԳԻՏԵՍ՝ ՈՎ Է ՄԵՂԱՎՈՐԸ

Ռուսաստանի նախկին նախագահ, նախկին վարչապետ, իսկ ներկայում Անվտանգության խորհրդի ղեկավարի տեղակալ Դմիտրի Մեդվեդեւը ցուցադրում է միջազգային հարաբերությունների էությունից իր անտեղյակությունը, միաժամանակ՝ Ռուսաստանի թուլությունն ու անճարակությունը: Նա հանդես է գալիս Ռուսաստանի Դաշնությունում կառավարող՝ «Միասնական Ռուսաստան» կուսակցության համագումարում, որի նախագահն ինքն է, եւ խոսում է հավաքական Արեւմուտքի կողմից Հայաստանի նկատմամբ վարվող քաղաքականության, Հայաստան-Ռուսաստան հարաբերությունների մասին, զգուշացնում Հայաստանի քաղաքացիներին՝ Ռուսաստանի հետ կապերի խզման հետեւանքների մասին: Փոխանակ բացատրի, թե ինչպես իրենց ձախողված քաղաքականության արդյունքում իրենց դաշնակից Հայաստանը դարձավ Արեւմուտքի ձեռքին Ռուսաստանի դեմ ուղղված գործիք, նա ինչ-որ մեղավորներ է գտնում Արեւմուտքում:

Այն, ինչ ասում է ռուսաստանցի քաղաքական գործիչն ու պաշտոնյան՝ Արեւմուտքի կողմից Հայաստանի նկատմամբ վարվող քաղաքականության մասին, հայտնի է բոլորին. «Արեւմուտքը Հայաստանի Հանրապետությունը դիտարկում է բացառապես որպես Ռուսաստանի դեմ պայքարի գործիք: Արեւմուտքը շահագրգռված է երկրի քաղաքական դաշտը մաքրել Մոսկվայի եւ Երեւանի միջեւ առողջ հարաբերությունների կողմնակիցներից»: Նա որպես օրինակ բերում է «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը մանդատներից, կուսակցության նախագահ Գագիկ Ծառուկյանին անձեռնմխելիությունից զրկելը, նրա նկատմամբ քրեական հետապնդում կազմակերպելը. «Այս ամենը տեղի է ունենում արեւմտյան երկրների լիակատար լռության պայմաններում... Իրենց սիրելի նեոգաղութատիրական գործելակերպի ոգով նրանք Հայաստանի պետական ապարատը բառացիորեն դարձրել են ձեռնասուն»:

Իհարկե, Արեւմուտքը Հայաստանն օգտագործում է որպես Ռուսաստանի դեմ պայքարի գործիք, եւ դա որեւէ մեկի համար ոչ նորություն է եւ, առավել եւս, ոչ էլ գաղտնիք: Արեւմուտքը, ի դեմս Հայաստանի եւ նրա իշխանության, ձեռք է բերել մի գործիք, որն օգտագործում է ըստ նշանակության, զարմանալի կլիներ, եթե հակառակը տեղի ունենար, այդ գործիքը չօգտագործեր կամ օգտագործեր ոչ ըստ նշանակության, ասենք՝ թույլ տար կամ նպաստեր Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ առեւտրատնտեսական, հոգեւոր-մշակութային կամ ռազմատեխնիկական կապերի զարգացմանը: Յուրաքանչյուր գործիք ձեռք է բերվում ըստ նշանակության օգտագործման համար, Արեւմուտքում հիմարներ չեն, որ այլ կերպ վարվեն:

Ինչպես նշեցինք՝ Դմիտրի Մեդվեդեւն իր ելույթում հանդես եկավ նաեւ ՀՀ քաղաքացիներին ուղղված զգուշացումով. «ՀՀ շարքային քաղաքացիների համար Ռուսաստանի հետ տասնամյակների ընթացքում կառուցված կապերի խզումն անխուսափելիորեն կհանգեցնի ծանր հետեւանքների: Սակայն ԵՄ-ն բացարձակապես չի հետաքրքրվում այս հարցերով»: Իսկ ինչո՞ւ պետք է ԵՄ-ին հետաքրքրի Հայաստանի քաղաքացիներին հասցվող վնասը կամ ծանր հետեւանքները:

Ռուսաստանը կորցրել է Հայաստանի նկատմամբ հսկողությունը եւ դրա համար մեղադրում է Հայաստանին ու հայ հասարակությանը, սակայն դա Ռուսաստանի ձախողումն է, որի գինը վճարում է ինչպես Հայաստանը, այնպես էլ Ռուսաստանը: Այս վիճակը շատ նման է նրան, որ Փաշինյանը եւ նրա շրջապատն իրենց ձախողումների համար մեղադրում են նախկիններին կամ Ռուսաստանի իշխանություններին: Չնայած այդ ձախողումներից տուժում են Հայաստանը եւ հայ հասարակությունը, բայց կարեւորը՝ կան մեղավորներ:

Ամեն անգամ, երբ չգիտես, թե ինչ անել, փորձում ես խնդիրը տեղափոխել «իսկ ո՞վ է մեղավոր» հարթություն եւ գտնել մի մեղավորի, որին պետք է վերագրես քո ձախողումը կամ անճարակությունը: Քանի որ Հայաստանի մասով շատ է ասվել, ասենք միայն Ռուսաստանի մասով: Հայաստանը Ռուսաստանի ազդեցությունից դուրս է եկել ոչ Հայաստանի մեղքով կամ կամքով, այլ Ռուսաստանի, Ռուսաստանի թուլության եւ իր շահերը պաշտպանելու հարցում անհետեւողականության պատճառով: Հայաստանի համար եղել է պայքար Ռուսաստանի եւ Արեւմուտքի միջեւ (Թուրքիան հանդիսանում է Արեւմուտքի մաս), եւ այդ պայքարում հաղթել է Արեւմուտքը, դրա համար Հայաստանը մեղավոր չէ: Մեղավոր չէ նաեւ հայաստանյան հասարակությունը, նա չի կարող միայնակ պայքարել եւ հաղթել Արեւմուտքի, Թուրքիայի եւ հայաստանյան նրանց դրածո կառավարիչների դեմ պայքարում: Երբ Մեդվեդեւը հայտարարում է, որ Արեւմուտքը Հայաստանը՝Ռուսաստանի վաղեմի եւ երկարամյա դաշնակցին վերածել է իր դեմ պայքարի գործիքի, դրանով ընդունում է իր երկրի պարտությունը: Բայց փոխանակ ընդունելու, որ իրենք պարտվել են, նրանք փորձում են այդ պարտության մեղավոր եւ պատասխանատու հռչակել Հայաստանին եւ Հայաստանի քաղաքացիներին՝ ասելով, որ նրանք իրենց վրա կզգան այդ պարտության հետեւանքները: Ասենք թե՝ կզգան եւ արդեն իսկ զգում են, հետո՞ ինչ: Իսկ մի՞թե Ռուսաստանը չի զգում իր աշխարհաքաղաքական պարտությունների ազդեցությունը, երբ իր տասնյակ դաշնակիցներ վերածվել են թշնամիների, երբ երկիրը շրջապատված է թշնամիներով եւ ոչ թե բարեկամներով: Կամ՝ խոսելով Հայաստանի մասին, մի՞թե իրենց հետաքրքրում է ՀՀ քաղաքացիների ճակատագիրը եւ ոչ թե այն, որ բարեկամ երկիրը վերածվել է թշնամու:

Ինչ վերաբերում է Գագիկ Ծառուկյանի դեմ իրականացվող քրեական հետապնդմանը՝ միայն նրա համար, որ նա Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ առողջ հարաբերությունների կողմնակից է, դա եւս Ռուսաստանի ձախողումն է: Պատկերացնո՞ւմ եք՝ ինչպիսին կլիներ Արեւմուտքի արձագանքը, եթե որեւէ

պրոարեւմտյան գործչի նկատմամբ քրեական գործ հարուցեին կամ, առավել եւս՝ զրկեին մանդատներից, ինչպիսի աղմուկ-աղաղակ հիմա բարձրացած կլիներ: Իսկ Գյումրու քաղաքապետ Վարդան Ղուկասյանը շուտով մեկ տարի կլինի՝ զրկված է ազատությունից միայն այն պատճառով, որ խոսել է Հայաստանի եւ Ռուսաստանի բարեկամական հարաբերությունների մասին: Ռուսաստանում որեւէ մեկը հիշո՞ւմ է նրա գոյության մասին: Հեշտ է սեփական ձախողումների համար մեղավորներ գտնել, միայն թե դրանից ի՞նչ օգուտ:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԵԿԵՔ ՀՄՈՌԱՆԱՆՔ՝ ԻՆՉԻ ՀԱՄԱՐ ԵՆՔ ՀԱՎԱՔՎԵԼ

Ես ՍԴ-ին, բողոքող ընդդիմությանը եւ պատասխանող ԿԸՀ-ին կոչ եմ անում չմոռանալ, թե ինչու ենք հավաքվել: Մի ամբողջ օր նվիրեցինք Սեդա Սաֆարյանի կողմնակալության չափը՝ էս գործից շահ ունի, թե չունի, բացահայտելուն: Հիմա, եթե շահ ունի, դրանից ի՞նչ է փոխվում, եւ կամ՝ եթե շահ չունի, դրանի՞ց ինչ է փոխվում: Տիկին Սաֆարյանն ընդամենը մեկ ձայն ունի ՍԴ-ում, մինչդեռ Փաշինյանին 5 դատավորի ձայն է պետք՝ ընտրություններում իր «հաղթանակը» ֆիքսելու համար: Առաջարկում եմ հանգիստ թողնել այդ կնոջը, որ, որպես իրավապահպան, 2008 թվականից կրակն է ընկել Նիկոլի ձեռը, այն էլ հարազատ եղբոր հետ՝ Ստյոպիկի: Շատ այսպես դերասանական ձեւերի մեջ՝ հարցեր է տալիս ԿԸՀ-ի նախագահին, անգամ մուննաթ գալիս վրան, ընդդիմությանն է «շշպռում» խրթին լեզվով ու բառակույտերով... Դե հիմա՝ միակ կին դատավորն է մյուսների մեջ, ինչ արած, պետք է յոլա տանել: Այո, յոլա տանել եւ չմոռանալ, թե ինչի համար ենք հավաքվել:

Բոլորիս (ՔՊ-ից բացի) խնդիրն այն է, որ Նիկոլը չունենա 4 դատավորի+1 (Սեդա Սաֆարյան) ձայն: Կարո՞ղ ենք սա անել, լավ, չե՞նք կարող՝ ավելի լավ... Գոնե կհամոզվենք, որ Սահմանադրական դատարան չունենք: Թող ՍԴ-ն մտածի՝ ինչպես ասում են: Բայց որտե՞ղ է գրված, որ ՍԴ-ն իրավունք չունի այնպիսի որոշում կայացնել, որ հանկարծ վարչապետի ու ԿԸՀ նախագահի սրտով չլինի: Հարցնում ես մարդկանց՝ ձեռքները թափ են տալիս՝ էէէ: Հավատ չկա այլեւս, 21 թիվ տեսած մարդիկ են: Անգամ ընդդիմության առանձին փաստաբաններ եւ ներկայացուցիչներ են թերահավատությամբ վերաբերվում գործընթացին: Ինչ է, ՍԴ-ում չի՞ կարող գտնվել 5 դատավոր, որ կկանգնեն ու ընտրակեղծարարներին կասեն՝ դուք ոտնահարել եք ժողովրդի կամքը: Դուք այդ կամքն սկսել եք ոտնահարել դեռ քարոզարշավի մեկնարկից առաջ, դուք դա արել եք քարոզարշավի օրերին, շարունակել եք անել ընտրությունների օրն ու դրանից հետո: Կա՞ն փաստեր: Իհարկե՝ կան: Կա՞ն կեղծված թվեր: Իհարկե՝ կան: Կա՞ն ԿԸՀ-ի ինքնագլուխ որոշումներ: Իհարկե՝ կան: Կա՞ն տեղամասեր, որոնցում քվեարկությունը ժամերով շարունակվել է 20:00-ից հետո: Իհարկե՝ կան: Գրանցվե՞լ է այնպիսի դեպք, որ 60 հազար քվե ստացած կուսակցությունը դուրս մնա խորհրդարանից: Գրանցվել է: Եվ այսքանից հետո ՍԴ-ում 5 դատավոր չի՞ ճարվում, որ հայտարարեն ընտրությունների արդյունքները չեղյալ ճանաչելու, նոր ընտրություններ նշանակելու եւ ընտրակեղծարարներին պատժելու անհրաժեշտության մասին: Բա եթե ՍԴ-ում 5 նորմալ (տղամարդ) դատավոր գտնելն է պրոբլեմ, ինչո՞ւ ենք կպել խեղճ Սեդա Սաֆարյանից: Տիկին Սեդան համարյա, ըստ էության, չի էլ խոսում: Այո, ընդդիմությանը քաղաքական հարցեր տալիս է, բայց եթե ՍԴ նախագահ պարոն Դիլանյանը շատ չբզբզի, նա այդ հարցերն էլ չի տա: Բարձր դատարանի նախագահը տիկնոջն անընդհատ կոչ է անում՝ ակտիվ լինել: Նույնիսկ մի առիթով անդրադառնալով այն քննադատություններին, թե ՍԴ դատավոր Սեդա Սաֆարյանի հարցադրումները քաղաքական գնահատականներ են պարունակում, Արման Դիլանյանը նշել է, որ դատավորներն օրենքով լիազորված են՝ ակտիվորեն մասնակցել գործի հանգամանքների պարզաբանմանը, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» օրենքը դատավորներին վերապահում է նման լիազորություններ, ինչը ենթադրում է նրանց առավել ակտիվ դերակատարությունը դատավարության ընթացքում: Պարոն Դիլանյան, ստիպված եմ նաեւ Ձեզ դիմել՝ եկեք չմոռանանք, թե ինչու ենք հավաքվել: Ինքներդ եք ասում՝ հավաքվել ենք «գործի հանգամանքների պարզաբանման համար»: Եվ, ուրեմն, ինչո՞ւ եք տիկին Սեդային հրահրում, «գործի հանգամանքների» հետ կապ չունեցող հարցեր ու ձեւակերպումներ հնչեցնել:

Ձերդ բարձրություն բարձր դատարան, պատվարժան գործընկերներ, ՀՀ կառավարության եւ ԿԸՀ-ի մեծարգո կասկածյալներ, հարգելի հյուրեր, մենք չպետք է մոռանանք, որ մեզ հետեւում է նաեւ միջազգային հանրությունը եւ սրտատրոփ սպասում հարցի հանգուցալուծմանը: Ո՞րն է լինելու մեր պատասխանը Չեմբերլենին... Վերջապես, ի՞նչ է տեղի ունեցել Հայաստանում՝ հերթական ընտրությունն՞ր, թե՞ էշի հարսանիք՝ համատարած ընտրակեղծիքներով, որոնք «համարյա» չեն ազդել արդյունքների վրա:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ԵԿԵՂԵՑԻ

Երեկ մենք ներկայացրել էինք սփյուռքում ծառայություն մատուցող Հայ առաքելական եկեղեցու բարձրաստիճան սպասավորներից մեկի տեսակետը, որը խնդրել էր գաղտնի պահել իր անունը՝ խոսելով ՀԱԵ եւ Հայաստանի շուրջ կատարվող իրադարձությունների մասին: Այսօր հրապարակում ենք զրույցի երկրորդ հատվածը:



ՏԱՐՈՆ ԱՃԵՄՈՂԼՈՒԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁՐԵՔ

- Սրբազան, Ռուսաստանը բավական խիստ սանկցիաներ է սահմանել Հայաստանից ԴԴ արտահանվող մի շարք հայկական ապրանքների նկատմամբ: Դա զգալի վնաս է հասցնում մեր տնտեսությանը: Առհասարակ, Ռուսաստանի հետ հարաբերությունները բավական լարվել են վերջին շրջանում: Ի՞նչ եք մտածում այս մասին:

- Քո թույլտվությամբ, սկսենք Ռուսաստանի հետ հարաբերությունների ներկա վիճակից: Նախ հարկ է, որ Հայաստանի իշխանությունները մի շարք ճշմարտություններ կամ աքսիոմներ հաշվի առնեն հատկապես արտաքին քաղաքականության ձեւակերպման ու իրականացման հարցում: Առաջին հերթին՝ իրենց հնարավորությունները գնահատեն, հետո՝ Հայաստանի հանդեպ արտաքին հետաքրքրվածության իրական պատճառները, ապա՝ աչքի առաջ ունենան աշխարհում ներկայում կատարվող զարգացումները, այսպես ասենք՝ գեոպոլիտիկան: Փորձեմ բացատրել ավելի մանրամասն, թե ինչ նկատի ունեմ: Էլի ասեմ՝ ես չեմ արդարացնում Նիկոլ Փաշինյանի կամ նրա կաբինետի գործունեությունը: Շատ հարցեր կան, որոնց հետ համաձայն չեմ: Հիմա փորձում եմ ուղղակի որպես «կողքից դիտող աչք» գնահատել իրողությունները՝ ըստ իմ կենսափորձի, գիտելիքների եւ ինֆորմացվածության: Եթե հիշում եք, մի երկու շաբաթ առաջ Տարոն Աճեմօղլուն բավական հետաքրքիր հայտարարություն էր արել՝ Հայաստանի հետ կապված: Հայաստանում այդ հայտարարության վրա քիչ ուշադրություն դարձվեց, մինչդեռ արի հասկանանք, թե ով է Աճեմօղլուն: Աշխարհի մակարդակով հայտնի տնտեսագետ, Նոբելյան մրցանակի դափնեկիր: Նման մակարդակի մարդկանցից սովորաբար որեւէ բանի մասին կարծիք հարցնում են, այսպես ասենք՝ բավականին զգալի գումար վճարելով: Նրանք այն մակարդակի փորձագետներից են, որոնք ամեն օր չէ, որ խոսում են էկրաններից կամ մամուլի էջերում: Նրանց գնահատականներին պետք է շատ ուշադիր լինել: Աճեմօղլուն ասել է մի բան, որը, իմ հասկանալով՝ Հայաստանի էկոնոմիկայի ամբողջական կամ համապարփակ գնահատականն է: Ի՞նչ է ասել նա: Առնվազն, որ Հայաստանի էկոնոմիկան բավական բարդ վիճակում է, Հայաստանը չունի հանքահումքային հարուստ բազա, հետեւաբար՝ նրա տնտեսության զարգացման միակ ուղին կարող է լինել թվայնացումը: Եթե ձեր հայրենով ասենք՝ Հայաստանի տնտեսությունը կարող է զարգանալ միայն գիտելիքահեն հիմքի վրա, միայն գիտության, թվայնացման գործուն ազդեցությամբ: Մյուս կողմից՝ Աճեմօղլուն նշում է, որ Հայաստանը փոքր երկիր է, ունի սահմանափակ ներքին պահանջարկ, մեկուսացված է բնական շուկաներից: Սա շատ սթափ ու իրատեսական գնահատական է: Հայաստանի իշխանությունները պետք է այս հայտարարության ողջ տարողությունը հաշվի առնեն: Փոքր երկիր, սահմանափակ շուկա, սահմանափակ ներքին սպառում, ոչ այնքան գնողունակ մոտ 3 միլիոն բնակչություն, մեծ շուկաներից, բնական պաշարների մեծ շուկաներից մեկուսացվածություն: Այս պայմաններում Հայաստանի համար Ռուսաստանի կամ Եվրասիական միության նման մեծ դաշնակից ունենալն ուղղակի փրկություն է: Կարող ես կարծել, թե ռուսամետ հայտարարություն եմ անում, բայց՝ ոչ: Ուղղակի սթափ գնահատում եմ, որքան թույլ է տալիս յոթ եւ ավելի տասնամյակների ապրած կյանքիս փորձառությունը: Ես դեմ չեմ, որ Հայաստանը լավ հարաբերություններ ունենա Եվրամիության հետ կամ նվաճի այլ շուկաներ: Սակայն արի ճիշտ հասկանանք: Ի՞նչ կարող է Հայաստանն առաջարկել Եվրամիությանը՝ տնտեսական առումով: Ինչո՞վ կարող է Եվրամիության համար Հայաստանը գրավիչ լինել, առհասարակ: Եվրամիությունն այն շուկան է, որն աշխարհի ամենագնողունակներից է: Այդ շուկայում տեղ ունենալու համար պայքարում են գրեթե բոլոր մեծ խաղացողները՝ Ռուսաստանն ու Միացյալ Նահանգները՝ վառելիքային ու էներգետիկ ոլորտում, Չինաստանը՝ գրեթե բոլոր ոլորտներում, ու այսպես շարունակ: ԵՄ-ում տասնամյակներով ձեւավորված տնտեսական հարաբերություններ կան, ավանդույթներ կան, բիզնես կապեր կան, էլիտաներ կան՝ իրենց «խորքային շերտերով»: Այս ամենը խոսում է մի բանի մասին՝ ԵՄ-ում չափազանց բարձր է մրցակցությունը: Հաշվի առեք նաեւ, որ Եվրամիությունում բավականին խիստ ստանդարտներ կան սահմանված: Որպեսզի ապրանքը կամ ծառայությունը հայտնվի ԵՄ-ում, պետք է այդ ստանդարտներին համապատասխանի: Եվ, ուրեմն՝ կարո՞ղ է արդյոք Հայաստանն այդ շուկայում մասնաբաժին նվաճել: Ապագայում՝ գուցե: Սակայն, ինչպես հիմա է նորաձեւ ասել՝ միջնաժամկետ ու կարճաժամկետ հեռանկարում՝ հազիվ թե: Հետեւաբար, էլի ձեզ մոտ հիմա շատ նորաձեւ բառով ասեմ՝ դիվերսիֆիկացիայի ներկա ճանապարհը, որով գնում է Հայաստանը, առնվազն հեռատես հաշվարկի վրա հիմնված չէ: Եթե ավելի կոշտ չասեմ՝ սխալ է: ԵՄ-ում արդեն սկսել են հնչել հայտարարություններ՝ Հայաստանի հնարավոր անդամակցության դեմ: Ինչի՞ մասին է խոսքը: Նայեք Ուկրաինային: Տարածքի ավելի քան 20 տոկոսը կորցրել է: Օրական կտրվածքով հարյուրավոր զոհեր է տալիս՝ պաշտպանելու համար Արեւմտյան բլոկին, սակայն նույնիսկ Ուկրաինայի եվրահինտեգրման հարցը մեծ հարցականի տակ է՝ անկախ այն ամենից, թե ով ինչ է հայտարարում: Հետեւաբար, ո՞վ է Հայաստանին վերցնելու ԵՄ կազմ կամ տրամադրելու արտոնյալ պայմաններ, կամ՝ ինչի՞ դիմաց: Ձեր ամենամոտ հարեւանը ձեզնից ավելի շատ փորձառություն ունի՝ Եվրամիության հետ հարաբերությունների եւ ինտեգրացիայի: Նայեք Վրաստանին: Մի՞թե վրացիներն այսքանը չեն հասկանում: Իհարկե, հասկանում են: Հատկապես հասկանում են, թե ինչով է պայմանավորված Եվրամիության՝ իրենց հանդեպ հետաքրքրվածությունը: Այստեղ արդեն գանք վերեւում ասածս մտքին, թե ինչու է Եվրամիությունը կամ Արեւմուտքը հետաքրքրված Հայաստանով:

Սերոբ ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԻՆՉՈՒ ԻՍՐԱՅԵԼԸ ՃԱՆԱՉԵՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Իսրայելի ԱԳ նախարար Գեդեոն Մոշե Սաարը իսրայելական կառավարությանն է ներկայացրել Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության ճանաչման մասին բանաձեւ: Իսրայելական կողմը փորձում է դա ներկայացնել որպես բարոյական եւ պատմական պարտք՝ մարդկության ամենամեծ ողբերգություններից մեկի նկատմամբ:

Իսրայելի կառավարությունն արդեն հավանության է արժանացրել բանաձեւը: Սա, իհարկե, նոր բան չէ: Իսրայելում առաջին տարին չէ, որ քննարկվում է Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը: Սակայն վերջին շրջանում այս թեմայով քննարկումները դարձել էին ավելի ակտուալ՝ կապված Իսրայել-Թուրքիա հարաբերությունների սրացման հետ:

Անցյալ տարվա սեպտեմբերին Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուն հայտնի ամերիկացի գործարար եւ փոդքաստեր Պատրիկ Բեթ-Դավիթի հետ զրույցում անձնապես էր «ճանաչել» Հայոց ցեղասպանությունը: Հասկանալի է, որ դա ավելի շատ PR քայլ էր: Այս քայլն ու ֆորմալ, այսինքն՝ իրավական առումով ճանաչելը տարբեր բաներ են: Ինչո՞ւ է, ուրեմն, հիմա Իսրայելը որոշել նման պրոցես սկսել եւ մինչեւ որ կետն է տանելու այդ պրոցեսը: Քաղաքագետ Սերգեյ Մարկեդոնովը նշում է, որ Իսրայելում թեեւ պաշտոնապես Հայոց ցեղասպանությունը ճանաչված չէ, սակայն ակադեմիական, քաղաքական եւ մեդիա շրջանակներում կան գործիչներ, որոնք կողմ են արտահայտվում դրան: 2000-ին, օրինակ, իսրայելական Քնեսեթի երկարամյա պատգամավոր, լրագրող, այդ պահին Իսրայելի կրթության նախարարի պաշտոնը զբաղեցրած Յոսի Սարիդը 1915 թվականի դեպքերն Օսմանյան կայսրությունում հանրայնորեն անվանել էր ցեղասպանություն:

2015 թվականին էլ Իսրայել պետությունն առաջին անգամ պատվիրակություն էր ուղարկել Երեւան՝ Հայոց ցեղասպանության 100-ամյակի հետ կապված միջոցառումներին մասնակցելու: Սակայն հանձնարարել էր, որ պատվիրակությունը գործածի «ազգային ողբերգություն» եւ ոչ թե «ցեղասպանություն» եզրույթը: Իսրայելի՝ մինչեւ վերջերս ունեցած դիրքորոշումը հասկանալի էր: Նախ՝ Թուրքիայի հետ կային լավ հարաբերություններ, եւ ապա նաեւ՝ Իսրայելն Ադրբեջանի հետ ուներ շատ ջերմ հարաբերություններ: Եվ, ի վերջո, Իսրայելը հրեական Հոլոքոստը դիտարկում է որպես եզակի պատմական ողբերգություն: Դրա համար էլ այլ ցեղասպանությունների հարցում Թել Ավիվը միշտ ծայրահեղ զգուշավոր է եղել: Այժմ, սակայն, իսրայելա-թուրքական հարաբերությունները չափազանց լարված են: 2023 թվականի հոկտեմբերի 7-ից հետո Անկարան դարձել է Իսրայելի՝ Գազայում իրականացրած գործողությունների ամենախիստ ու հետեւողական քննադատներից մեկը: Էրդողանը պաղեստինցիների նկատմամբ իսրայելցիների գործողություններն անվանել է ցեղասպանություն: Թուրքիան դադարեցրել է առեւտրային հարաբերություններն Իսրայելի հետ, հայց է ներկայացրել Իսրայելի դեմ՝ ՀԱՀ գործողությունների հետ կապված ՄԱԿ միջազգային դատարանում մասնակցություն ունենալու համար: Այս քայլով Իսրայելը ոչ միայն Թուրքիային է «բան հասկացնում», նաեւ՝ Միացյալ Նահանգներին է ազդակներ ուղարկում, որ իրեն դուր չի գալիս ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններում ռազմատեխնիկական բաղադրիչի ամրապնդումը: Թեեւ, որոշակիորեն նաեւ բարոյական հարց էլ կա: Հոլոքոստից հետո ստեղծված հրեական պետությունը, մեծ հաշվով, բարոյական պարտք ունի՝ ճանաչելու այլ ցեղասպանությունները՝ կարծում է Մարկեդոնովը:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Դիլիջանի համայնքապետը բնակչից 9 միլիոն դրամ է պահանջում

Դիլիջան համայնքի ՔՊ-ական ղեկավար Դավիթ Սարգսյանը Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան քաղաքացիական հայց է ներկայացրել Դիլիջանի բնակիչ Նաիրա Ամիրխանյանի դեմ: Ըստ Դատալեքսի՝ համայնքի ղեկավարը հայցով դատարանից խնդրել է. 1. Պատասխանող Նաիրա Ռազմիկի Ամիրխանյանին պարտավորեցնել՝ հրապարակայնորեն ներողություն խնդրել հայցվոր Դավիթ Մարտունի Սարգսյանից «Հայցադիմումի փաստական հանգամանքներ» բաժնի 4-րդ կետում նշված արտահայտությունների համար, 2. վիրավորանքի համար, հօգուտ հայցվորի, պատասխանողից բռնագանձել նվազագույն աշխատավարձի 3000-ապատիկի չափով գումար՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում: 3. պատասխանող Նաիրա Ամիրխանյանին պարտավորեցնել՝ հրապարակային հերքել «Հայցադիմումի փաստական հանգամանքներ» բաժնի 4-րդ կետում նշված արտահայտությունների համար, 4. զրպարտության համար, հօգուտ հայցվորի, բռնագանձել նվազագույն աշխատավարձի 6000-ապատիկի չափով գումար՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում: Դավիթ Սարգսյանի ներկայացրած հայցադիմումը Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանը 2026թ. փետրվարի 17-ի եւ 2026թ. մարտի 3-ի որոշումներով վերադարձրել է: Հայցադիմումը նորից է ներկայացվել, եւ մարտի 18-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Նարինե Անանյանը որոշել է կրկին ներկայացված հայցադիմումն ընդունել դատարանի վարույթ: Հայցադիմումի պատճառը, հավանաբար, Տիկ-Տոկում համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի հասցեին Նաիրա Ամիրխանյանի արտահայտություններն են:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՑԱՆԿ

ԾՆՈՂՆԵՐԸ ԴԺԳՈՀՈՒՄ ԵՆ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ՝ ՄԵՂՔԸ ԲԱՐԴՈՒՄ ԾՆՈՂՆԵՐԻ ՎՐԱ

Հունիսի 23-ին, ժամը 09:00-ից առաջին դասարանցիներ ունեցող ծնողները «ստարտ ռեժիմի վրա» սպասում էին, որ իրենց երեխաներին հայտագրեն նախընտրած դպրոցի առաջին դասարանի համար: 2026-2027 ուսումնական տարվա առաջին դասարան հաճախող երեխաների առցանց հայտագրման փուլի մեկնարկը հունիսի 23-ին էր: Վերջին տարիներին, իբրեւ թե կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում, երեխաների՝ առաջին դասարան հայտագրումը կազմակերպվում է առցանց եղանակով, ինչը ծնողների կյանքն ուղղակի դժոխքի է վերածել: Իսկ այս տարի դժգոհությունը գերազանցել է բոլոր նախկին տարիներին եղածը, քանի որ հայտագրման կայքն է փոխվել, եւ մեծ դժվարություններ են առաջացել: Հաղորդակցությունների մասնագետ Սամվել Մարտիրոսյանն անգամ կատակել էր, որ դեսպանատներում օր վերցնելն ու երեխային առաջին դասարան հայտագրելը ճանաչվել են քույր-մայրաքաղաքներ:

Պարզվում է՝ համակարգից օգտվելը շատ բարդ է, այս տարի նաեւ պահանջվել է, որ ծնողն էլեկտրոնային հասցե ունենա եւ այլն: Ծնողների դժգոհությունն այս տարի շատ մեծ ալիք է բարձրացրել: Մենք բազմաթիվ ահազանգեր ենք ստանում ծնողներից, որ երեխաներին չեն կարողացել հայտագրել իրենց նախընտրած դպրոցում, իսկ ԿԳՄՍ նախարարությունը որեւէ հարցում չի ընդառաջում իրենց:

«Հրապարակը» նախ մեկնաբանություն խնդրեց ԿԳՄՍՆ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի՝ ԿՏԱԿ-ի տնօրեն **Արտակ Պողոսյանից**, պարզելու, թե ինչն է խնդիրը, որ այս տարի համակարգը շատ վատ է աշխատել, եւ մի շարք երեխաների ծնողներ կանգնել են փաստի առաջ: Նա մեզ հետ զրույցում խոսելով թեմայի մասին՝ ասաց. «Ծրագիրն աշխատում է, եթե խնդիր է լինում, պատճառը ծանրաբեռնվածությունն է: Այդպիսի խնդիր եղել է ամսի 23-ին, խնդիրը լուծվել է, եւ աշխատել է նորմալ: Մինչեւ հիմա էլ համակարգն աշխատում է անխափան, առանց որեւէ խոչընդոտի, առանց որեւէ ծանրաբեռնվածության: Եթե ծանրաբեռնվում է, հավասարապես բոլորի համար է այդպես: Ինչ վերաբերում է կասկածներին, որ կարող է ռոբոտ լինել, արտաքին միջամտություն լինել, ապա նման բան գոյություն չունի, որովհետեւ համակարգը արտաքին գնահատում է անցել՝ հատուկ միջամտությունների մասով, եւ կա եզրակացություն, որ այն արտաքին միջամտություններից առումով անխոցելի է, եւ հնարավոր չէ այնտեղ աշխատեցնել ռոբոտներ եւ նմանատիպ այլ բաներ»:

«Եթե ծնողը ցանկանում է կատարել հայտագրում, ապա առաջին հերթին հայտագրումն իրականացնելու համար պետք է ստեղծի իր անհատական հաշիվը, նույնականացվի, համակարգն ավտոմատ ճանաչի նրան: Հայտագրման օրը ծնողն արդեն որեւէ բան չի լրացնում, եթե նախկինում ծնողը հայտագրման օրը լրացնում էր իր անունը, ազգանունը, հեռախոսահամարը, հանրային ծառայության համարանիշը, ապա ներկայիս համակարգով այդ գործողությունները չի անում, այլ ընդամենը երեք պարզ գործողություն է իրականացնում: «Սկսել հայտագրումը» կոճակը հայտնվում է իր երեխայի անվան ներքեւում, ընտրում է ուսուցման լեզուն՝ հայերեն կամ ռուսերեն, ընտրում է դպրոցը եւ սեղմում է «հայտագրել» կոճակը, ու վերջ: Այս ամենը հնարավոր է անել 30 վայրկյանում: Պետք չէ զարմանալ, որ լիցենզիայով սահմանված որոշակի դպրոցներում տեղերը սպառվել են, ինչու, որովհետեւ, օրինակ, եթե այդ դպրոցում լիցենզիայով սահմանված է 100 տեղ՝ պայմանական թիվ եմ ասում, բայց ցանկացողները, որ իրենց երեխան այդ դպրոցում սովորի, 400-ն են, բնականաբար, հասցնելու է 100-ը հայտագրվել, եւ 300 հոգին չեն հասցնելու հայտագրվել»:

Բայց ծնողները համատարած դժգոհում են, արդյո՞ք այդ դժգոհությունն անտեղի է. եթե համակարգն անխափան աշխատում է, ինչո՞ւ են մարդիկ այդքան դժգոհում՝ նկատեցինք մենք: «Խնդիրը պայմանավորված էր սովորության ուժով: Պարզաբանման մեջ նշված էր, որ ծնողը պետք է իր հաշվից մուտք գործեր՝ գրանցվելու համար, ծնողները նաեւ ունեցել են հնարավորություն՝ տեսնելու, թե որ դպրոցում քանի ազատ տեղ է մնացել: Մենք այդ հղումն ավելացրել էինք ծնողների խնդրանքով: Նախորդ տարիներին ծնողները սովոր էին, որ նախ դպրոցների ցանկն է բացվելու, եւ հետո դպրոցի ընտրությունից հետո նոր ծնողը սկսում է հայտագրումը, այս տարի հենց այդ մեխանիզմն է փոխվել»:

«Հրապարակը» նաեւ մեկնաբանություն խնդրեց Երեւանի թիվ 68 հիմնական դպրոցի տնօրեն Նելսիկ Մովսիսյանից: Նրան հարցրինք՝ ինչպես է լուծվել առաջին դասարանցիների առցանց հայտագրման խնդիրը, քանի աշակերտի ծնող է կանգնել նման խնդրի առաջ: «Մենք մեկ-երկու ծնողի օգնել ենք, որոնք դժվարացել էին, սակայն հիմնականում կարողացել են գրանցվել: Ես պատրաստակամություն եմ հայտնել՝ դասվարների հետ միասին, որպեսզի դժվարացող ծնողներին օգնենք, այժմ խնդիր առկա չէ»:

Շուշան ՍԱՐԻԿՅԱՆ

«ԿՂԶԻ». ԶՂՋՄԱՆ ՈՒ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ԷԿՐԱՆԱՎՈՐՈՒՄ

Պավել Լունգինի «Կղզի» կինոնկարը, որն էկրան է բարձրացել 2006 թվականին, մասնագետների գնահատմամբ՝ այն ժապավենն է, որը ժամանակակից լեզվով ներկայացնում է, թե ինչ են քրիստոնեական զղջումն ու ապաշխարությունը, ինչ է բարոյական ընտրությունը՝ հոգեւոր-քրիստոնեական ընկալմամբ: Սա ռուսական կինոարվեստի այն գործերից է, որը չի կարելի ընկալել զուտ որպես գեղարվեստական ստեղծագործություն: Սա կինոնկար է, որը ստիպում է մտածել, քննարկել, անդրադառնալ կյանքի եւ մարդու համար հավերժական հարցերին: Երկու տասնամյակ է անցել կինոնկարի՝ էկրան բարձրանալուց, սակայն այն շարունակում է հետաքրքրել լսարանին, քննարկվել: Ֆիլմը եզակի է նաեւ նրանով, որ ընդգծված կրոնական թեմատիկան ներկայացվել է այնքան լավ, որ լայն լսարանն այն ընդունել է:

Կինոնկարի առանցքում վանական հայր Անատոլիի պատմությունն է, որը Հայրենական մեծ պատերազմի տարիներին՝ մահվան սպառնալիքի տակ դաժանություն է անում՝ կրակելով իր ծառայակից ընկերոջ վրա: Այս դրվագը դառնում է նրա հետագա ողջ կյանքի ապաշխարության պատճառը: Տասնամյակներ անց նա ապրում է հյուսիսային վանքերից մեկում, ունի պայծառատեսության եւ բժշկության շնորհ, սակայն շարունակում է մնալ սեփական անցյալի գերին: Նրա ճանապարհը սրբի ճանապարհ չէ, այլ սեփական մեղքի ամենօրյա գիտակցման, զղջման ու ապաշխարանքի ծանր ուղի: Կինոնկարի յուրահատկություններից մեկն այն է, որ արտաքին գործողությունների դրամատիզացիա, որպես այդպիսին, չկա: Կոնֆլիկտը զարգանում է առաջին հերթին գլխավոր հերոսի ներսում: Արտաքին գործողությունները շատ պարզ են. ուխտավորներ են գալիս վանք, շփվում են վանականների հետ, վանքն ապրում է իր առօրյա կյանքով: Ու այդ ամենի մեջ էլ հայր Անատոլիի ներքին պայքարն է: Կինոնկարի հիմնական ասելիքներից մեկը զզջման ու ապաշխարանքի քրիստոնեական ընկալումներն են: Ժամանակակից ընկալմամբ՝ դա էմոցիոնալ ակտ է՝ բարոյական ափսոսանք: «Կղզում» դա դառնում է գոյաբանություն, գլխավոր հերոսի համար՝ կենսակերպ: Հայր Անատոլին իրեն արժանի չի համարում ներման, չնայած հոգեւոր շնորհներ ունի: Նա իրեն աններելի մեղավոր է համարում: Ու այստեղ հարցն այլ բնույթ է ընդունում, թե արդյոք մարդը կարո՞ղ է ազատվել իր մռայլ անցյալից, ու ե՞րբ է դա վրա հասնում: Կարո՞ղ է արդյոք մարդը քավել անցյալում գործած մեղքը եւ ե՞րբ է հասկանում, որ ներման է արժանացել: Կինոնկարում փոխանցված «մեսիջները» առանձնահատուկ «հմայք» են ստանում ընդհանուր մթնոլորտի պատկերմամբ՝ վանական միջավայր, խիստ բնություն եւ այլն: Վանքը յուրահատուկ վայր է, որտեղ տիրում են հոգեւոր ազատություն, Աստծո հետ հաղորդակցությունը, որտեղ վերանում են սոցիալական բոլոր անհավասարությունները, ու առօրյա թոհուբոհը հասանելի չէ:

Այսօր, երբ մարդիկ սովորել են ապրել արագության մեջ, ու նույնիսկ զգացմունքները, հույզերն ու ապրումներն են ենթարկվում այդ արագ տեմպին, «Կղզին», որտեղ թվում է, թե ժամանակը կանգ է առել, եւ վանքի տարածքը վեր է ժամանակից, պահպանում է իր արժեքը, շնորհիվ այն փիլիսոփայական-կրոնական բովանդակության, որը դրվել է ֆիլմում՝ գեղարվեստական, ռեժիսորական, սցենարական կամ այլ «գրավչություններից» բացի:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՏԵՍՆՈՒՄ Է՝ ՉԻ ԳԻՏԱԿՑՈՒՄ, ԼՍՈՒՄ Է՝ ՉԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

«Անտոնյան ջան: Լինեմ անկեղծ. չեմ ուզում հարցազրույց: Նախկինի համար խնդիրներ են առաջացել: Երեխաներս պետական աշխատողներ են»: Օրերս ստացած այս նամակը պատասխանն էր իմ առաջարկին՝ հարցազրույց տալու: Իսկ հարցերն ուղարկել էի, ըստ նախնական պայմանավորվածության, իմ բանաստեղծ, նկարիչ, երկար տարիներ ուժային համակարգում աշխատած մի բարեկամին, որը հայտնի է իր ընդդիմադիր հայացքներով: Մարդիկ զգուշանում են, որովհետեւ համակարգը եւ երկրում տիրող մթնոլորտը ազատ խոսքն ու կարծիքը չեն հանդուրժում: Չենք մեղադրի համակարգի «գերիներին»:

Բայց մի հարց՝ այդ «համակարգին». Հարգելի՛ «համակարգ», քո անճոռնի, արատավոր դեմքը չե՞ս տեսնում այս պատասխանում: Ընդդիմադիր ընկերոջ՝ հարցազրույցից հրաժարվելուց զատ, մեկ այլ դեպք նկարագրեմ. իշխանությանը նվիրված մի ընկեր էլ ունեմ՝ բանաստեղծ, մի շարք ժողովածուների հեղինակ, գրական մրցանակների դափնեկիր: Նա իշխող կուսակցության մեջ ոչ մի թերություն չի տեսնում, զույգ ձեռքով ու ոտքով մտել է քվեախուց եւ, ափսոսալով, որ ընդամենը մեկ ձայն ունի, «հոգով ու սրտով» ընտրել է ՔՊ-ին ու նրա առաջնորդին: Զարմանում էի. ինչո՞ւ, ինչպե՞ս չի նկատում այն իրականությունը, որի մեջ ապրում են, եւ որի մեջ օր-օրի խրվում է երկիրը: Կամ արդյոք առաջընթաց, մի փոփոխություն, որը ես չեմ նկատում: Սոցիալական վիճակն է բարելավվել, տնտեսությունն է զարգացել, անվտանգությունն է ամրապնդվել, իշխանական լեքսիկոնն է ավելի բարեկիրթ դարձել, եկեղեցու դեմ արշավից են հրաժարվել... միթե այս բոլորը չի նկատում: Ցանկացա զրուցել իշխանությանն աջակցող այս բանաստեղծի հետ՝ հասկանալու, թե ինչպես է լինում, որ նույն իրականությունը տեսնում ենք, բայց «ապրում» ենք տարբեր աշխարհներում: Անունը չէի թաքցնի: Նա լավ բանաստեղծություններ է երկնել: Հենց այդ պատճառով ինձ համար ցավոտ էր նրա քաղաքական ընկալումների հետ բախվելը: Կարծում էի՝ պոեզիա ստեղծող մարդն ամեն ինչի նկատմամբ պետք է զգայուն լինի եւ իր ժողովրդի ցավը զգա մաշկով, սրտով, հատկապես՝ երբ երկիրը վտանգի մեջ է: Նա սիրով պատասխանեց հարցերիս, խոսեց, թե ինչու էր հարկավոր ընտրել Փաշինյանին: Հարցազրույցը գրեցի, կարդաց եւ հորդորեց չհրապարակել: Ինչու. պատճառաբանեց. «Տղաս ռուսական մի հիմնարկում է աշխատում: Կհեռացնեն»: Բայց որեւէ հակառուսական միտք չկա տեքստում: Պատասխանեց. «Հենց դա էլ կնկատեն...»:

Իսկ իր ընտրությունը բացատրում էր այսպես. «Ես որեւէ կուսակցության չեմ հարել: Ես ժողովրդի մարդ եմ: Բայց չեմ կարող չտեսնել փոփոխությունները: Հիմա ավելի ճանաչված եմ դարձել, գրքերս տպագրվում են: Սահմանին կրակոցներ չկան, զինվոր չի զոհվում: Աշխատավարձերն ու թոշակները բարձրացել են: Ճանապարհներ, դպրոցներ, մանկապարտեզներ են կառուցում: Իշխանությունն իր համար դղյակներ չի կառուցում: Եվ ամենակարեւորը՝ խաղաղություն է եկել»: Վերջ: Պարզ է, որ մարդը տեսնում է այն, ինչ ուզում է տեսնել, եւ չի տեսնում ամենակարեւոր բաները: Հարցրի. «Տեղյա՞կ եք, որ դպրոցաշինությունը թերի է, նախկինում էլ են դպրոցներ կառուցվել եւ դրա կողքին հարյուրավոր դպրոցներ են փակվել՝ հատկապես սահմանամերձ գյուղերում, ինչն արդեն ազգային անվտանգության խնդիր է»: Պատասխան. «Երեւի չափազանցություն է: Գուցե նորոգումների պատճառով են փակվել»: Ասացի. «Այո, ասֆալտապատում կա, բայց նոր կառուցված ճանապարհներն արագ քանդվում են»: Պատասխանեց. «Ճանապարհ է, կքանդվի՝ նորից կսարքեն: Կարեւորը՝ սարքում են: Հիշեցի թոշակները. «10 հազար դրամն ի՞նչ պիտի անի թոշակառուն, եթե այսքան գնաճ կա»: Պատասխան. «Բարձրացրել են, ուրեմն մտածում են ժողովրդի մասին»: «Եթե մտածում էին, ինչո՞ւ հիշեցին միայն ընտրություններից առաջ»: Լռություն: Ամենացավոտը խաղաղության հարցն էր. երբ ՀՀ տարածքներում օտար ուժեր կան, Բաքվում հայ գերիներ են պահվում, գրեթե ամեն օր հնչում են «անկլավների», «միջանցքի», «Արեւմտյան Ադրբեջանի» մասին հայտարարություններ, Ալիեւը գրեթե ամեն օր նոր պահանջներ է ներկայացնում, այդ թվում՝ սահմանադրական փոփոխությունների պահանջ, ինչպե՞ս կարելի է խոսել խաղաղության մասին: Պատասխան. «Խաղաղության պայմանագիրը կլինի՝ բոլոր հարցերը կլուծվեն»: Այսինքն, խաղաղությունը դեռ չի եկել: Լռեց:

Վերջապես հասկացա, թե ինչն է խնդիրը. մարդը լսում է, բայց չի ընդունում փաստը, տեղեկությունը հասնում է ականջին, բայց ոչ՝ գիտակցությանը: Գուցե դա ինքնապաշտպանությունն է. մարդը փորձում է մերժել իրականությունը, որ իր ներսում ստեղծած հավասարակշռությունը չխախտվի: Վերջում հիշեցրի ԵԽ պատգամավոր Անդրիսենի կոչը՝ հրաժարվել Հայաստանին ԵՄ անդամակցություն առաջարկելու գաղափարից՝ «կեղծ ակնկալիքներ չստեղծելու համար», հիշեցրի, որ սկզբում եվրոպական խոստումներով ՀՀ ընտրազանգվածին հավատացրին այդ եվրահեքիաթին, հետո պարզվեց՝ անդամակցության ակնկալիքներ չպետք է ունենանք: Հայաստանի հետ կարելի է հանդիպել, ժպտալ, լուսանկարվել, բայց ոչ ավելին: Ահա Ռուսաստանի հետ հարաբերությունների խզման գինը. հին ուղին փակվեց, նորը չբացվեց: Պատասխանեց. «Մենք Ռուսաստանի գերին չենք: Նիկոլն ամեն ինչ կկարգավորի»: Փաստ է, որ արտաքին դաշտում լարված է, արդար ընտրություններ չկարողացան կազմակերպել, թշնամու զորքը ՀՀ տարածքից դուրս չի գալիս, եթե երկրի ղեկավարը չի կարողանում կատարել իր պարտականությունները, ո՞րն է ճիշտ լուծումը: Լռեց: Չկարողացավ ասել՝ «ճիշտ լուծումը թողնել հեռանալն է»:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 1.07.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ՑԱՎՈՎ Է ՀԻՎԱՆԴ



Արամայիս ԱՍԼԱՆՅԱՆ

Ինչպեսեւ սպասվում էր, հունիսի 7-ի ԱԺ ընտրությունների արդյունքները հայաստանյան ընդդիմադիր հավաքական թեւը ոչ օրինակարգ (ոչ լեգիտիմ) որակեց: Մի քանի օր հայաստանյան տպագիր մամուլը, եթերը, համացանցը պայթում էին խախտումների առատությունից եւ բազմազանությունից: Անցել են շաբաթներ, թվում է՝ ընդդիմադիր թեւը հասկացավ, որ հետագա պայքարը խորքային, գաղափարական եւ ոչ անձնավորված է լինելու, ուստի առանց համագործակցաբար վերլուծելու, գրագետ քաղաքական հաշվարկներ անելու, իշխանություններին անգամ տեղից շարժելը քիչ հավանական է: Ընտրությունների արդյունքները հստակեցրին նաեւ, որ այս անգամ իշխող ուժը զուրկ է սահմանադրական առավելությունից, իսկ 2/3 առավելությամբ՝ չի կարող բռնատիրական վարքագիծ դրսեւորել խորհրդարանում: Գործող իշխանության միակ հույսը մնում է նույնը՝ հոգնած ամբոխին, հատկապես միշտ շահող լյումպենին՝ կոլաբորացիոնիստ զանգվածին եւ մեծահարուստ գործարարներին «վախեցնելը»: Օրինակ. վարչապետը ՀՀ երկրորդ նախագահին սպառնում է, թե կվերականգնի մարտի 1-ի փակված գործը, երբ ինքն է փակել 1999-ի հոկտեմբերի 27-ի, 2008-ի մարտի 1-ի ոճրագործությունները եւ բիզնեսը փաստացի անձեռնմխելի դարձրել: Եվ հանկարծ, այսօր նա ՀՀ երկրորդ նախագահին ընկալում է որպես լուրջ ընդդիմադիր ո՞ւժ...

Անհասկանալի է, թե ինչու է վարչապետն այսօր էլ իրեն պատառոտում, սպառնալիքներով ստիպում հանրությանը հավատալ հենց իրեն: Չէ՞ որ 2026-ը 2018-ը չէ: Արդեն ամեն մի հնչած միտք պետք է երաշխավորվի հավաստի վստահությամբ: Իսկ դա այլեւս անհնար է: Հավանաբար, նրա մտածելու կարողությունը (ինտելեկտը) սպառվել է, որի հաշվին մեծացել է ստերի, չափազանցությունների կծիկը: Անգամ երբ մի լուրջ միտք է սպրդում, այն տարրալուծվում է կեղծիքների, ստերի, չափազանցությունների բովում: Ուստի՝ կայացած ԱԺ ընտրություններն իշխանությունների բարոյական պարտությունն էր, ընդդիմության համար՝ համեստ հաղթանակ:

Փաստենք, որ պատվիրված «նոր» սահմանադրության հանրաքվեն իր բնույթով ուղղակիորեն անձնավորված չէ, զուտ գաղափարական է եւ տոգորված է պատվիրատուի քաղաքական շահերով: «Նոր» սահմանադրությունը հայոց անկախ պետականության լինել-չլինելու խնդիրն է տորպեդահարելու, բայց... Բայց գալիք հանրաքվեն քանի որ անձնավորված չէ, ընդդիմադիրներին միավորելու միտում ունի: Տեսնենք:

Այդուհանդերձ, երեք մեծ բանավեճերի եւ դրանց շուրջ մտորումներն ու կարծիքները չեն սպառվում: Ահա դրանցից առավել յուրահատուկները:

1. Հայաստանում նոր կառույցներ են ստեղծվում (նաեւ կուսակցություն-կառույցներ), որոնցում գաղափարախոսություն չկա, կա կաղապարաբանություն՝ որոշակի ակնկալիքներով:

2. Ցավալին այն է, որ հանրությունը նույնացվում է ռեժիմի հետ: Զարմանալի չէ, քանզի Հայաստանի հանրության զգալի մասը կաղապարի կողմնակից է, այլ ոչ՝ գաղափարի:

3. Գաղափարի (ռազմավարության) գործնական արտահայտությունը մարտավարական ծրագիրն է՝ գաղափարի իրագործման մեխանիզմը: Այդ տարբերությունը շատերին դեռեւս հասու չէ, իսկ «սրտիկ անելը» ոչ գաղափար է, ոչ էլ ծրագիր, բայց հանրության զգալի մասն այն ընկալում է որպես «խաղաղության երաշխիք»:

4. Կայացած երեք խոշոր բանավեճերը լի էին անձնավորված ինքնագովեստ-անեծքային կաղապարաբանություններով եւ դարձան ստերի եւ բանսարկությունների ճոխ տոնահանդեսներ:

5. Եթե Վանո Սիրադեղյանը դիտեր այդ բանավեճերը, կասեր՝ իշխանության եկան նույն տապարով տաշած մարդիկ:

6. Բանավեճերի արդյունքում ոմանք եկան այն մտքին, որ «գիշատիչ» եւ «ազգակործան պատուհաս» մակդիրները հոմանիշեր են:

7. Այդ ընթացքում Հայաստանի քաղաքական դաշտում գաղափարական պայքարի գիծը, այսպես թե այնպես, պահում էր ՀԱԿ-ը:

8. Միակ առավելությունը, որ ունեին քարոզարշավն ու ամփոփիչ բանավեճերը, այն էր, որ այդ գործընթացում տեղ չունեին Գնել Սարգսյանի թատերականացված քաղաքական «մտքերը»:

9. Հանրությունը հետընտրական այս շրջանում անորոշության ցավով է հիվանդ:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am